№ 188 ՈՒՐԲԱԹ, 28 ՕԳՈՍՏՈՍԻ

1909

ՈՒՐԲԱԹ, 28 ՕԳՈՍՏՈՍԻ № 188

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տպարանի տելեֆօն № 228.

ՄՇԱԿ
(37-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Սեպտեմբերի 1-ից մինչեւ տարվայ վերջը 4 րուբլի:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԲԺԻՇԿ
ՄԻՔԱՅԷԼ ԱՂԱՋԱՆԵԱՆ
Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս եւ մորթու հիւանդութիւնների
→ վերադարձաւ ←
և առաջվայ նման ընդունում է հիւանդների
Ընդունելութիւնը ամեն օր: 1—4 ժամը ցերեկվայ, 7—9 ժամը երեկոյեան
Միխայլեան պր. 38 (Բէլլական դպր. դիմաց), հեռ. 663.
(առ.) 841. 10—4

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
ՎԱՌՎ. ՍՄԲԱՏԵԱՆՑԻ
Պատրաստվում են երկսեռ աշակերտներ բոլոր միջնակարգ (և Ներսիսեան, Յովնանեան, Գայիանեան) դպրոցներ ընդունվելու: Աւանդվում են նաև ֆրանսերէն, գերմաներէն. ձեռագործ (կերտուածք, ղաղում և կողովագործութիւն) և մարմնամարզութիւն: Ընտանիքիս մէջ միասին ապրելու կայ 2 աշակերտի տեղ: Ընդունելութիւնը սկսված է: Սօլօլակ, փող. Պասկեվիչի, № 13.
(շ. կ. չ. ու.) ա. 819. 6—4

ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ

Տեղական ինքնավարութեան էական և կարեւոր խնդիրներից մէկն է ընտրողական իրաւունքը:

—Արդեօք ի՞նչ է պահանջվում ընտրողական ձայն ունենալու համար:

Ռուսաստանի ներքին նահանգներում ընտրական իրաւունք վայելելու համար պարտաւորական է համարվում ունենալ որոշ արժէքի կալուածք և կամ տուրքեր, որոնք նշանակված են որոշ արժէքի տան, շինութեան կամ ուրիշ ձեռնարկութեան վրա:

Թիֆլիսի խորհրդակցութիւնները, քննութեան ենթարկելով ընտրական իրաւունք որոշող պայմանները, եկան այն եզրակացութեան, որ պէտք է վերցնել ոչ թէ այն սկզբունքը, որ սահմանված է Ռուսաստանի ներքին նահանգների համար, այլ մի ուրիշը, այն է՝ գեմստվային տուրքի վճարումը: Եւ որովհետև գեմստվային տուրք վճարողների թիւը մեծ է, ուստի և հաւանական է թւում, որ այս սկզբունքով կը ստուարանայ ընտրական ձայն վայելողների թիւը և գեմստվային գործը կընդունի աւելի ժողովրդական բնաւորութիւն:

Սակայն հարց է ծագում, թէ արդեօք ի՞նչ չափ պէտք է սահմանել ընտրական իրաւունք ստանձնելու համար, այսինքն ի՞նչ մեծութեան կամ քանակի տուրք պէտք է նշանակել իբրև նուազագոյն աստիճան, որից պակաս վճարողը այլ ևս անկարող է վայելել ընտրական իրաւասութեան արտօնութիւն:

Անշուշտ, բնական և տրամաբանական կը լինէր ցանկալ, որ առանձին չափ չը նշանակվէր այդ տուրքի քանակի համար, այլ ամեն մի մարդու, որ վճարում է գեմստվային տուրք, իրաւունք տրվէր ընտրական ձայն ունենալու և մասնակցելու տեղական ինքնավարութեան գործերին:

Այն ժամանակ, արդարև բաւական կը մեծանար ընտրողների թիւը և ապագայ գեմստվային բիւջէտի ընդարձակման և ուժեղացման համար կը լինէր տուրք վճարողների մեծ թիւ, որը հնարաւորութիւն կը տար տեղական ինքնավարութեանը աւելի մեծ նիւթական միջոցներ գրաւելու իր կուլտուրական նպատակներն իրագործելու համար:

Որքան էլ մեծ լինէր այդպիսի ընտրական իրաւունքներ վայելողների թիւը, այնուամենայնիւ, անկասկած, կը մնար ազգաբնակութեան մի որոշ մաս, որը զրկված կը լինէր այդ իրաւունքներից:

Եթէ այդպիսի քաղաքացիներին մենք դեռ կարող էինք ասել, թէ նրանք զրկվել են ընտրական իրաւունքից, որովհետև չեն մասնակցում տեղական ծախքերի բիւջէտային ապահովութեան գործին, ապա ի՞նչ կունենանք ասելու այն անձերին, որոնք իրապէս մասնակցում են և շատ թէ քիչ վերցնում են իրանց վրա տեղական ծախքերի հայթայթման պարտաւորութիւնը:

Գեմստվային տուրք վճարելն ինքն ըստ ինքեան, առանց տուրքի քանակը որոշելու, պէտք է համարվի հիմք ընտրական իրաւունքի համար և այդ սկզբունքի վրա պէտք է կառուցել տեղական ինքնավարութիւնը:

Ա. Քալանթար

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Պետերբուրգ, 25 օգոստոսի

Նորին Մեծութիւնների մեկնումը Նոր Պետերհոֆից Սեվաստոպօլ գնալու համար՝ կատարվեց առանձին հանդիսաւորութեամբ:

Նորին Մեծութիւններին ուղեկցում են կայսրուհու շքախմբի ֆրէյլինաներ իշխանուհի Օրօլէնսկայա, Բիւցօվա, Տիւտչէվա, Շնէյդէր, Պալատի մինիստրը, հոֆմարշալ կոմս Բենկենդորֆ, Պալատի կոմենդանտը, Նորին Մեծութեան ֆլագ-կապիտանը, Պալատի մինիստրութեան դիւանապետը, Նորին Մեծութեան անձնական պահակախմբի պետը, ֆլիգել-ադիւտանտ իշխան Օրլօվ, Դրենտէլն, պալատական-բժիշկ Բոտկին, կայսերական գնացքների կառավարիչը, հայր Բլագօվէշչէնսկի և գեներալ-մայոր Թումանօվ: (Հ. Գ.)

Մոսկվա, 26 օգոստոսի

Նորին Կայսերական Մեծութիւններին գնացքին տեղի ունեցաւ հանդիսաւոր դիմաւորումն իշխանութիւնների, քաղաքի և դասակարգերի ներկայացուցիչների կողմից: Շրջակայ շինութիւնները և փողոցները ընկղմված էին դրօշակների մէջ:

Կայսրը դուրս եկաւ վագօնից պալատի մինիստրի և շքախմբի անդամների ուղեկցութեամբ, ընդունելով զօրքերի հրամանատարի, քաղաքապետի և նահանգապետի զեկուցագիրը՝ մօտեցաւ և առաւ միտրոպօլիտ Վլադիմիրի օրհնութիւնը, յետոյ անցաւ իշխանաւորների շարքերով:

Աղ ու հաց մատուցին նահանգական պարագլուխը և քաղաքագլուխը, որը Կայսրից խնդրեց կրկին այցելել Մոսկվան: Կայսրը ողորմածաբար թոյլատրեց քաղաքագլխին տեղեկացնել Մոսկվայի բնակիչներին, որ կը մտնէ վերադարձին:

Ուրիշ պաշտօնական անձերի ներկայանալուց յետոյ, 30 հինաւուրց շրջանային տանուտէրեր բաղդ ունեցան Թագաւոր Կայսրին աղ ու հացի հետ ներկայացնել մի ամենահպատակ ուղերձ, շնորհակալութեամբ, գիւղացիների մասին հոգածութեան, յետ գնման տուրքերի վերացման և նոյեմբ. 19-ի օրէնքի հրատարակման համար:

Ողորմածաբար մնաս բարև ասելով բոլորին, Կայսրը մտաւ սալօն-վագօնը, ուր գտնվում էր ամբողջ Կայսերական Ընտանիքը:

Գնացքը «բարձրաձայն ուռաների» տակ Մոսկվայից դուրս եկաւ ցերեկվայ ժամը 5-ին: (Հ. Գ.)

ԳՈՒՆԻԲՈՒՄ

Գունիբ, 26 օգոստոսի

Երէկ, մաղթանքից առաջ զօրքերը շարվեցին կործանված Գունիբ աուլի մօտերը չորս գծով: Առաւօտեան ժամը 10-ին եկաւ ընդհանուր հրամանատարը և անլռելի «ուռաների» տակ անցաւ զօրքերի միջով:

Յետոյ սկսվեց մաղթանք: Գունիբի լեռնից Կայսրին արեշատութիւն մաղթելու բոպէին Կովկասի Փոխարքան «ուռա» առաջարկեց ռուսաց զօրքերի Ինքնակալի համար, որ միասիրտ արձագանքվեց զօրքերի և բոլոր ներկայ եղողների մէջ: Երաժշտախումբը նուագեց ազգային օրհներգը:

Գեներալ Եասէնսկին «ուռա» առաջարկեց Փոխարքայի համար: Փոխարքան պատասխանեց «ուռա» առաջարկելով կովկասեան քաջարի զօրքերի համար:

Զինւորական քայլերթից յետոյ կայացաւ ճաշ, ուր Փոխարքան բաժակ առաջարկեց Թագաւոր Կայսրի կենացը, Գունիբի ընկած հերոսների բարի յիշատակի համար, իշխան Բարեատինսկու, Դաղստանի խաղաղ [illegible]ման, Նրա աշխատաւոր և ազնիւ բնակիչների համար:

Ամեն մի բաժակից յետոյ լսվում էին թնդանօթի պարպումներ և անվերջ ուռաներ:

Ճաշի ժամանակ նուագում էին չորս երաժշտախմբեր:

Ճաշից յետոյ տեղի ունեցան կովկասեան պարեր: Բոլոր ժամանակ եղանակը շատ լաւ էր, միայն վերջում խոշոր անձրև եկաւ կարկտախառն: (Հ. Գ.)

Գունիբ, 26 օգոստոսի

Օգոստոսի 24-ին Կովկասի Փոխարքային ներկայացան շրջանի ամեն մի վիճակից պատգամաւորութիւն վէտէրաններով և գեներալ Կուամբէկի առաջնորդութեամբ, որ Դաղստանի կողմից մատուցեց աղ ու հաց: Նահանգապետ Վօլսկին շրջանի կողմից խնդրեց առոտս Կայսրի արկանել անսահման սիրոյ և հպատակութեան զգացմունքները:

Յետոյ Շամիլի նախկին նաիբի որդի Գօկիէկինսկին ճառ արտասանեց, որով ուրախութիւն յայտնեց Ռուսաստանի հետ միացման մեծ բարիքի համար: Դաղստանի ժողովուրդները ռուս ժողովրդի հետ միասին պետական շահերի ընդհանուր հասկացողութեամբ ջերմագին աղօթում են Թագաւոր Կայսրի արեշատութեան համար: Դաղստանը թէև ռուսական ընտանիքի ուշացած անդամ է, սակայն հնազանդ է Թագին և առաջին իսկ կոչից պատրաստ է ամեն բան զոհել ի պաշտպանութիւն Թանգագին հայրենիքի: (Հ. Գ.)

Գունիբ, 26 օգոստոսի

Բոլոր զօրքերը վաղը մեկնում են իրանց ձմերային բնակարանները: Փոխարքան մեկնելու է առ. ժամը 6-ին: Գունիբը երկրորդ օրն է հրավառված է: (Հ. Գ.)

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Հայոց եւ յունաց պատրիարքների հրաժարականը.

Կ. Պօլիս, 26 օգոստոսի

Բ. Դուռը, հրաժարվելով ներումն շնորհել մահվան պատժի դատապարտված 7 հայերի, հայոց պատրիարքը հրաժարական տուեց: Հնարաւոր է և յունաց տիեզերական պատրիարքի հրաժարականը, Բ. Դռան հետ ունեցած [illegible] Մակեդոնիայի եկեղեցիների և յունական մատաղ սերնդի կրթութեան գործում պատրիարքարանի անկախութեան հարցերի առիթով: Յոյն լրագիրները հաւատացնում են, որ իբր թէ տիեզերական պատրիարքը, առանց հրաժարվելու, ժամանակաւորապէս կը տեղափոխէ իր աթոռը Մոսկվա: (Հ. Գ.)

Հեռագրական Գործակալութիւնը հաստատում է այն լուրը, որ «Մշակը» հաղորդեց մի քանի օր առաջ, թէ հրաժարված Գաբրիէլ էֆ. Նորատունկեանի փոխարէն առևտրի և հաղորդակցութեան ճանապարհների մինիստր է նշանակվում փաստաբան Պետրոս Հալաճեանը:

Սալոնիկ, 26 օգոստոսի

Երէկ եկաւ գեներալիսիմուս Մահ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՄԵՐ ԵՐԿՐԻ ՄԷՋ*)

(Փամբակ, Գեղարքունի, Աբարան, Արագած, Աբարանպօլ)

Վերջացնելով մեր գործը Դանագիրմազում, մենք ճանապարհ ընկանք դէպի Հաջի-Խալիլ, որտեղ գտնվում էր Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեան բացած միւս արհեստանոցը:

Ես կամենում էի բարձրանալ նաև Արագածի արօտատեղերը դիտելու թէ ինչպէս են առաջ գնում կաթնատնտեսութեան վարպետ Լ. Զառաֆեանի պարապմունքները. բայց տեղեկացայ, որ նա մի երկու օր առաջ իջել է սարից և գնացել Ղարաքիլիսա՝ նոր սերզատ գործիք բերելու համար:

— Իսկ ի՞նչ է արել իր մօտ եղածը,— հարցրի ես:

— Տուել է չօբանքեարեցի մի Թուրքի,— բացատրեցին գիւղացիները:—Չօբանքեարեցի Հասան հաջի Ղասում օղլին, հաւանելով սերզատը, խնդրել է զիջել մեքենան իր իսկական արժէքով 70 րուբլով: Զառաֆեանն էլ համաձայնել է: Հասանը օրական ունի մօտ 10 պուդ կաթ:

Եւ այդպիսով այս տարի չօբանքեարեցիները սկիզբ են դնում սերզատով կաթնատնտեսութիւն առաջ տանելու, իսկ Աբարանպօլի գիւղացիները դեռ մտածում են, ծանր ու բարակ են անում և սպասում են, մինչև իրանց միջից էլ դուրս գայ մի Ղասում օղլի:

Դէպի-Հաջի-Խալիլ ճանապարհն անցնում է Արագածի լեռնակողերով: Երբ Դանագիրմազի հողերից բարձրացանք, բացվեց մեր առաջ այն բարձրադիր և ցուրտ շրջանը, որ յայտնի է Աբարանպօլ անունով:

Դա այն շրջանն է, ուր հացը շատ շուտ մրսում է, ուր ցորենը տեղի է տուել գարուն, ուր ձմեռվայ ձիւնախառն մրրիկները կամ «Թիփիները» անմատչելի են անում գիւղերը և լեռնադաշտերը ամբողջ օրերով և երբեմն շաբաթներով:

Մենք առաջ էինք գնում դիտելով Աբարանպօլի հօրիզոնը: Մեր ձախ կողմից նրան ընդգրկում էին Արագածի կողերը, աջ կողմից այն լեռնախմբերը, որոնք կըպած են Միսխանի բարձրութիւններին, առջևում երևում էր Փամբի Թիկունքը, իսկ փոքր ինչ հեռւում ցցված էին Ղօլղաթ (8150 ոտնաչափ) և Գեալինդայա սարերի գագաթները:

— Մեր ցաւը, մեր սուգը այդ կողմից է գալիս,—բացատրում էին գիւղացիները:

— Ինչպէ՞ս:

— Այդ կողմից, այդ սարերի միջի ճեղքուածքից փչում է քամի, որը մենք անուանում ենք Զըղըրի կամ Կարսի քամի: Եթէ եղանակը ցրտեց և փչեց այդ քամին, այն ժամանակ միշտ երկիւղ ենք կրում, որ արտերը կը փչանան, ցուրտը կը տանի: Ինքը քամին չէ վտանգաւոր, այլ եղեամը, որ նստում է հասկերի վրա քամուց յետոյ խաղաղ գիշերներին: Եւ որքան այդ գիշերները աւելի խաղաղ են, այնքան աւելի մեծ է վտանգը: Քամին միայն նախաբանն է, որին հետևում է սառն եղեամը:

— Ինչպէ՞ս է այս տարի:

— Առայժմ լաւ է: Այս տարի հունձը մի շաբաթով աւելի վաղ է հասել: Եթէ մի շաբաթ էլ հանգիստ անցնի, ազատված կը լինենք վտանգից:

Գիւղացիները բացատրեցին, որ համեմատաբար աւելի շատ են վնասվում այն գիւղերի արտերը, որոնք ցածր դիրք ունեն և գտնվում են լեռնադաշտի տափարակի վրա, իսկ լեռնալանջերում, ուր մշտական օդի շարժում կայ, եղեամը չէ կարողանում գոյանալ և սառցնել հասկերը:

— Մեր գարին ցանելու օրից մինչև հունձը ունի 105 օր, իսկ ցորենը 115—120 օր,—բացատրում էր մի բանիմաց գիւղացի:—Եւ որովհետև գարին, զարգացման կարճ միջոց ունենալով, աւելի ապահով է զանազան պատահարներից, ուստի և Աբարանպօլը ցանում է գարի, մանաւանդ որ դեռ գարին էլ ապահով չէ մրսելուց:

— Եւ որ աւելի ցաւալին է, այդ այն է, որ ցրտատար գարին կորցնում է իր կենսունակութիւնը և իբրև սերմացու դառնում է անպէտք:

Մեր առաջ ձգված լեռնադաշտը այս տարի յոյս ունէր ազատ մնալու վտանգներից, և գիւղացիները ուրախ սրտով աշխատում էին դաշտերում:

Մենք հասանք Հաջի-Խալիլ և իջանք գիւղական դատարանի շինութեան մէջ:

Մեզ հանդիպեց ջուլհակութեան վարպետ Յովհաննէս Արիստակէսեանը իր օգնականով և գիւղական գրագիր Ա. Նիկողոսեանը:

Դատարանի շինութեան մէջ էր գտնվում և կրթական ջուլհականոցը:

Մենք այցելեցինք նրան և նայեցինք պատրաստված իրերին: Արհեստանոցում կային մի քանի աշակերտուհիներ:

— Արհեստանոցը դիտաւորութիւն ունէինք բանալ գիւղի մէջ,—բացատրեցին վարպետը և գրագիրը,—և նոյնիսկ զետեղեցինք Փիլոսի տանը, բայց յետոյ գիւղացիների մէջ ինչ-որ ներքին ընտանեկան առարկութիւններ ծագեցին, թէ ինչու պէտք է լինի այս կամ այն տանը:

Վերջ ի վերջոյ խնդիրը լուծվեց նրանով, որ ջուլհականոցը բացվեց գիւղական դատարանի շէնքում և բոլորը գոհ մնացին:

Ջուլհականոցը գալիս են նայելու շրջակայ հայ, քիւրդ և Թուրք գիւղացիները, հաւանում են գործուածքները և միաբերան ասում են, որ եթէ արհեստը փոքր ի շատէ շահաւէտ լինի, նա բարիք կը լինի Աբարանպօլի ազգաբնակութեան համար:

Աբարանպօլը 7000—7500 ոտնաչափ բարձրութեան տեղեր ունեցող մի երկիր է: Ունի բաւական լաւ հող, բայց չէ կարողանում այդ հողից օգտվել լիակատար կերպով, որովհետև տարի չէ անցնում, որ ցուրտը չը վնասի այս ու այն գիւղին:

Ահա բնութիւնից զրկված այդ Աբարանպօլում, ուր գարունը, ամառը և աշունը հազիւ չորս և առ առաւելն հինգ ամիս է տևում, ուր գիւղացին մօտ ինն ամիս ազատ է երկրագործական աշխատանքից, ահա այդ շրջանում Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութիւնը բացել է այս տարի մի շարք արհեստանոցներ, այն է Դանագիրմազ, Հաջի-Խալիլ, Աղզուլա, Ղրխդաղիրման, Բեշիրքեանդ, Մնջուխլու գիւղերում և պատրաստել է գործիքներ բանալու արհեստանոցներ Մելիքքեանդ և միւս գիւղերից մէկում կամ երկուսում:

Աղզուլա գիւղում ջուլհակութեան սկիզբ դրվել էր դեռ անցեալ տարի ամառը. բայց նա գործեց միայն մի ամիս, իբրև փորձ, իսկ շարունակութիւնը յետաձգվեց մինչև այս գարուն:

Աղզուլեցի Բարսեղ Եսայեանը, որի տանը բացված էր անցեալ տարի արհեստանոցը, ամբողջ ձմեռ ռմբակոծում էր ինձ նամակներով, խնդրելով որ նրանց չը մոռանանք և վարպետ ուղարկենք: Եսայեանը իր նամակներում ցոյց էր տալիս, որ Աբարանպօլի զրկված գիւղացին կարօտ է աշխատանքի՝ իր ազատ և պարապ ժամերը զբաղեցնելու և մի քանի կոպէկներ վաստակելու համար:

Աբարանպօլի յիշատակած բոլոր գիւղերը կազմում են մի գիւղական տանուտէրական մեծ հասարակութիւն, որի կենտրոնն է Հաջի-Խալիլ գիւղը:

Այդ հասարակութեան մէջ գտնվող և միւս գիւղերը՝ հայ և Թուրք Գեօզալդարաները, Զանգիթափա, Փամբ և եզիդի Քարվանսարայ գիւղերը նոյնպէս խնդրում են բանալ արհեստանոցներ: Եւ անշուշտ բոլոր գիւղերում ընկերութիւնը կը բանար արհեստանոցներ, եթէ ունենար աւելի միջոցներ իր տրամադրութեան տակ:

Հաջի-Խալիլի հասարակութիւնը ունի պաշտօնապէս 957, բայց իրապէս աւելի քան 1200 ծուխ՝ մօտ 7000 շնչով: Եւ եթէ աջողվէր սահմանների հետ դրացիութիւն անող ժողովրդի այդ զանգուածին տալ աշխատանքի նոր աղբիւր, դա կը լինէր մի մուդ-Շէվքէթ փաշան։ «Մ. և Ա.» կոմիտէտի նախաձեռնութեամբ կազմվեց մի հանգանակիչ յանձնաժողով՝ մի յածանաւ ձեռք բերելու Թիւրքաց նաւատորմի համար։ Նոյն տեսակ յանձնաժողովներ կազմվել են Ադրիանուպօլսում և Բրուսայում։ (Հ. Գ.)

---

*) Տես «Մշակ» № 183.

Կ. Պօլիս, 26 օգոստոսի

Ջաւիդ-փաշան մեկնեց Դուլիւ մի բատալիօն զօրքով և թնդանօթներով զսպելու ալբանական ապստամբութիւնը։ Պրիզրէնի նահանգապետը արձակված է Բ. Դրան կարգադրութեամբ։ Մօսուլի շրջականերում 10,000 քիւրդերը ապստամբել են այժմեան րէժիմի դէմ, ինչպէս հաղորդում են հիւպատոսները։ (Հ. Գ.)

Երէկ (օգոստոս 18) հայոց պատրիարք սրբ. Դուրեանը Բ. Դուռ գնալով երկար տեսակցութիւն ունեցաւ մեծ վէզիր Հիլմի փաշայի և ներքին գործերի մինիստր Թալաաթ բէյի հետ։

Պատրիարքը կրկնեց իր միջնորդութիւնը այն 4 հայերի մասին, որոնց՝ Ադանայի զինուորական դատարանը դատապարտել էր մահվան և որոնց վճիռը պիտի գործադրվէր այս օրերս։

Մեծ վէզիրի ձեռք առած միջոցների շնորհիւ այս մահվան վճիռը չի գործադրվի։

Պատրիարքը խօսեց մեծ վէզիրի և ներքին գործերի մինիստրի հետ նաև Զէյթունի գործի մասին, որը երէկվանից սկսած սաստիկ զբաղեցնում է հայոց պատրիարքարանը։ Երէկ հայոց պատրիարքարան հասած մի հեռագրի համաձայն՝ Մարաշի*) զինուորական դատարանը մի քանի զէյթունցի հայերի կոչնագիր է ուղարկել, որոնք մեղադրվում են մի հին գործում։ Զէյթունցիք մերժեցին դատարան գնալ և իրանց մի քանի ընկերների հետ, ընդամենը 40 հոգու չափ, զինված, բարձրացան սարերը։ Նրանց դէմ անմիջապէս զօրք է ուղարկվել, և լուր կայ, թէ արդէն ընդհարումը սկսվել է։

Պատրիարքի միջամտութեան շնորհիւ զէյթունցիների վրա ուղարկված զօրքը պիտի յետ կանչվի. միւս կողմից՝ ամեն ջանք պիտի գործ դրվի համոզելու համար ամբաստանեալներին, որ նրանք ներկայանան դատարան։ («La Turquie»)

Կ. Պօլիս, 19 օգոստոսի

Պարլամենտական առանձին յանձնաժողովը շարունակում է իր զբաղմունքները՝ մինիստրութիւնները վերակազմելու համար։ Պաշտօնեաների 30 տոկոսը կարձակվի պաշտօնից։

Թուրքաց կառավարութիւնը գնում է «Դրէդնաուտ» տիպի երկու զրահակիր նաւ, որոնք կառուցվում են այժմ Ջէնօվայում բրազիլեան կառավարութեան համար։

Հիլմի փաշան խոստացաւ, որ Ադանայում մահվան պատժի դատապարտված 45 հոգին մահվան պատիժ չեն կրի։

Յունաց պատրիարքը դիմեց մեծ վէզիրին մի յիշատակագրով, որի մէջ գանգատվում է, որ յոյներին հալածում են գաւառներում։ Մեծ վէզիրը պատասխանեց պատրիարքին, որ պատրիարքարանի համար աւելի լաւ կը լինէր զբաղվել կրօնական գործերով և չը խառնվել քաղաքականութեան մէջ։

Մէջէդից հաղորդում են, որ այնտեղ արիւնահեղ ընդհարում է տեղի ունեցել երկու շէյխերի կողմնակիցների միջև։ Պահանջվում են զօրքեր՝ յուզմունքը խաղաղեցնելու համար։ («Бирж. Бѣд.»)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թէհրան, 26 օգոստոսի

Շտապ պատրաստութիւններ են տեսնվում նախկին շահի մեկնելու համար, որ նշանակված է օգոստ. 27-ին։

Ռուսաց դեսպանատան ներկայացուցչի ներկայութեամբ բացվեց փողերանոցը և յանձնվեց կառավարութեան, որ այս օրերս վերսկսեց դրամահատութիւնը։ Կառավարութիւնը ուղարկում է շահնշահի (անգլիական) բանկի միջոցով շահի գանձարանի թանգագին իրերը Պարիզ՝ Լիօնեան կրեդիտի բանկը, յուսալով ստանալ նրանց վաճառումից (կիսատ է)։ (Հ. Գ.)

Թաւրիզ, 26 օգոստոսի

Գունիբի առման 50-ամեակի տօնման ժամանակ Սնարսկու զօրամասն եկաւ գնդապետ Կարնաուխօվի խումբը, անցնելով Սերաբից Թաւրիզ երեք նուագով։ Խմբին ընդունեցին երաժշտութեամբ։ Գեներալ Սնարսկին շնորհակալութիւն յայտնեց դժուարին ճանապարհորդութեան համար։ Խումբը իր հետ բերեց Րահիմ խանի վերադարձրած 180 ուղտերը։

Գեներալ-նահանգապետը պատրաստվում է մի արշաւախումբ ուղարկել Ղարադաղ։ Սաթթար խանը և Բաղըր խանը հրաժարվեցին մասնակցել։

(Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Սամարա, 26 օգոստոսի

Այսօր գիշերվայ ժամը 1-ին ռումբերով և ատրճանակներով զինված մի աւազակախումբ, դիմափոխված, Միսսա կայարանում կողոպտեց 80,000 րուբլի։ Սպանվեցին 3 պահակներ և դռնապանը. ծանր վիրաւորվեցին մօտ 10 հոգի։ Կտրելով հեռագրաթելերը, կողոպտիչները հեռացան շոգեմեքենայով, իջան Սիրոստան և Խրեբէր կայարանների միջև, իսկ շոգեմեքենային բաց թողին եկած գծով առանց մեքենավարի։ Ուղարկվեց պահակախումբ։ (Հ. Գ.)

Մելիլիա, 25 օգոստոսի

Ամբողջ առաւօտը կռիւ էր տեղի ունենում մաւրերի և Մելիլիայի մօտերը բանակ դրած զօրաբանակի մի մասի միջև։ Սպանական արտիլերիան ցրեց թշնամուն։ (Հ. Գ.)

Բերլին.—Մասնագէտներն արդէն մեծ վստահութեամբ են ընդունում այն տեղեկութիւնը, որ Կուկ հասել է Հիւսիսային Բևեռին։ Բերլինի առաւօտեան լրագիրները գիտական տեսակէտից սակաւ գնահատելի են համարում Կուկի էքսպէդիցիան իր գործադրութեամբ և հետևանքներով։ Կոպենհագենում կը կայանայ հանդիսաւոր դիմաւորումը Կուկին՝ Թագաւորի առաջնորդութեամբ։ («P. B».)

Բերլին.—«Berl. Tag.» լրագրին հեռագրում են Կ. Պօլսից, որ Սալօնիկում երիտասարդ-թիւրքերի նորերս տեղի ունեցած կոնգրէսում վճռվեց ոչինչ զիջումներ չանել կրետական հարցում, իսկ ծայրայեղ դէպքում դիմել զինուորական ուժի։

Լոնդօն, 19 օգոստոսի

Կաբիլների և սպանացիների միջև երէկ տեղի ունեցաւ կատաղի կռիւ, որ տևեց առաւօտեան 8 ժամից մինչև ցերեկվայ 1 ժամը։ Սպանացիները տարան յաղթութիւնը։

Սպանական միսսիան Մարոկկօյում բանակցութիւններ է վարում խաղաղութեան մասին։ («P. C.»)

ԴԷՊՔԵՐԸ ՅՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ

«Vossische Zeitung» լրագրի թղթակիցը հետևեալ կերպով է հաղորդում դէպքերը Յունաստանում։

Դեռ ևս մի փոքր առաջ Րալլին, նկատելով որ յուզմունքը երկրում գնալով սպառնալի կերպարանք է ընդունում, յայտնեց թագաւորին, որ նա կարող է պարլամենտ գումարել միայն այն դէպքում, եթէ Թէօտօկիսի կուսակցութիւնը համաձայնվի աջակցութիւն ցոյց տալ իրան, որովհետև ինքը մեծամասնութիւն չունի պատգամաւորների ժողովում։ Թագաւորն այդ պատճառով ուղարկեց իր քարտուղարին Թէօտօկիսի մօտ խնդրելով հաղորդել իրան, թէ արդեօք համաձայն է պաշտպանել Րալլիի կաբինետը։ Թէօտօկիսը սակայն պատասխանեց, որ նա չէ կարող աջակցութիւն ցոյց տալ մի մարդու, որը իրան մի քանի շաբաթ առաջ միայն յեղափոխութեան սպառնալիքով ստիպեց հրաժարական տալ։ Րալլիի այն յոյսը, որ իրան կաջողվի պատգամաւորների ժողով հրաւիրել և դրանով մի փոքր հանգստացնել երկիրը, այդպիսով չարդարացաւ։ Այդ ժամանակամիջոցում յուզմունքն Աթէնքում գնալով աճում էր։ Քաղաքական կլուբները, օֆիցէրները և համքարները երեք օր շարունակ խորհրդակցում էին գործերի դրութեան մասին։ Այդ խորհրդակցութեան հետևանքն էին այն պահանջները, որ մեզ մօտ արդէն տպվեցին։

Երբ այդ պահանջները խմբագրվեցին, երեք օֆիցէրներից բաղկացած մի պատգամաւորութիւն ընտրվեց այդ պահանջները Րալլիին ներկայացնելու համար։ Րալլին հրամայեց կալանաւորել պատգամաւորութիւնը։ Այն ժամանակ Աթէնքի բերդապահ զօրքի զինուորները, թւով 4000 մարդ, գնացին ուրբաթ գիշերը, օգոստոսի 14-ին, Գուդիի արուարձանը, որը գտնվում է մօտաւորապէս մի ժամ հեռաւորութեամբ Աթէնքից, բանակ դրին այնտեղ և իրանց հրամանատար ընտրեցին արտիլերիայի կապիտան Գուվէլիսին։ Քաղաքում յուզմունքը ծայրայեղ լարման հասաւ։ Խանութները փակվեցին, լրագիրները լոյս չը տեսան, իսկ ժողովրդի բազմաթիւ խմբեր գնացին Գուդի համակրութիւն յայտնելու օֆիցէրներին։ Լուրերը այն մասին, թէ թագաժառանգ Կոնստանտինը դիտաւորութիւն ունի դիմադրութիւն ցոյց տալ, իսկ ներքին գործերի մինիստրը փորձեր է անում ժանդարմերիայի կրտսեր օֆիցէրներին թշնամացնել աւագների դէմ և դրանով կառավարութեան կողմը գրաւել նրանց, աւելի ևս կատաղեցրին Գուդիում հաւաքված օֆիցէրներին։ Լարիսայից և Նաւպլիայից պատգամաւորութիւններ եկան տեղական բերդապահ զօրքերից ուղերձներով, որոնց մէջ համերաշխութիւն էր յայտնվում այն պահանջներին, որ անում էին Աթէնքի օֆիցէրները, և ապա գաւառական բերդապահ զօրքերի շատերից տեղեկութիւններ ստացվեցին, որ զօրքերը պատրաստ են արշաւել Աթէնքի վրա, որպեսզի աջակցութիւն ցոյց տան Աթէնքի զինուորներին։ Կառավարութեան դրութիւնն աւելի և աւելի կրիտիկական էր դառնում և միայն Աթէնքի մեծ ժողովրդականութիւն վայելող քաղաքագլուխ Մերկուրիսի ջանքերի շնորհիւ աջողվեց դրդել զինուորականներին համաձայնվել հետևեալ կօմպրօմիսին։ Մավրօմիխալիսի նոր կաբինետը մտան բոլոր ժամանակ շարժման ղեկավարող օֆիցէրական գաղտնի կազմակերպութեան երկու անդամ, այն է գնդապետ Սարբաս, որպէս զինուորական մինիստր, և կապիտան Դամիանօս՝ ծովային։ Արքայական տան պրինցները առ այժմ մնում են զօրքի մէջ, բայց միայն պատւաւոր տեղեր կը գրաւեն և այլևս հրամանատարների պաշտօններ չեն ստանայ։ Նոր կաբինետը իր բոլոր ջանքերը գործ կը դնի երկրի զինուորական միջոցները մեծացնելու և վարչութեան ամբողջ սիստեմի բարւոքման վրա առհասարակ։

Պաշտօնական հեռագիրները ասում են, որ շարժմանը մասնակցող օֆիցէրներին «ներումն» է շնորհված։ Սակայն հազիւ թէ ներումն կարելի լինի անուանել կառավարութեան այդ ակտը, քանի որ նա կատարելապէս անզօր է և նրան ուրիշ բան չէր մնում, բայց եթէ վաւերացնել կատարված փաստը։ Ուժը այժմ կառավարութեան ձեռքում չէ,—իշխանութիւնը ո՛ր կաբինետն ևս ունենայ,—այլ օֆիցէրների ձեռքումն է։ Լրագրական տեղեկութիւնների համեմատ, զինուորական կազմակերպութեան մէջ մտնում են զօրքի 450 օֆիցէր և նաւատորմի 150 օֆիցէր։ Յունաստանում այժմ շատ հեշտ կարող է պատահել նոյն բանը, ինչ որ մի տարի առաջ արդէն տեղի ունեցաւ Թիւրքիայում, այսինքն պաշտօնական կառավարութեան հպատակումը օֆիցէրների կօմիտէտին, որոնց ձեռքում մինիստրները միայն խաղալիքների դեր են կատարում։ Այդ պատճառով արտասահմանեան համարեա ամբողջ մամուլը այն կարծիքն է յայտնում, որ ներկայ ճգնաժամը չէ կարելի լուծել նոր մինիստրութիւն նշանակելով և որ զինուորական ապստամբութիւնը Աթէնքում աւելի ևս լուրջ դէպքերի նախաբանն է միայն Յունաստանում։

ՇՎԷԴԱԿԱՆ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ

Ստոկհօլմից հեռագրում են Բերլինի լրագիրներին օգոստոսի 18-ից (31-ին) հետևեալը.

«Դրութիւնը ներկայումս աւելի անյուսալի է, քան առաջ։ Վերջին օրերի դէպքերից յետոյ պարզվեց, որ չէ կարելի յուսալ գործադուլի դադարման վրա մերձակայ ապագայում։ Որպէս այժմ յայտնի դարձաւ, գործադուլը ղեկավարող կոմիտէտը անցեալ շաբաթ քննում էր այն հարցը, թէ արդեօք չը պէ՞տք է դադարեցնել գործադուլը, գոնէ նրա այն մասում, որից ամենից աւելի տանջվում է ամբողջ հասարակութիւնը։ Կոմիտէտը սակայն չուզեց վերջնական որոշում կայացնել այդ հարցի վերաբերմամբ, յուսալով որ կառավարութիւնը, վերջապէս, կը միջամտէ։ Սակայն որովհետև կառավարութիւնը կտրական կերպով յայտնեց, որ նա հնարաւոր չէ համարում միջամտել, կոմիտէտը որոշեց շարունակել գործադուլը իր ներկայ չափերով»։

ԼԵՒ ՏՕԼՍՏՕՅԻ ՄԱՍԻՆ

Կոնցէրտներ և հասարակական զուարճութիւններ սարքող մի ինչ-որ հիմնարկութիւն, իմանալով որ Լ. Ն. Տօլստօյ պատրաստվում է Ստոկհօլմի խաղաղութեան կոնգրէսում կարդալ ճառ-զեկուցում, առաջարկեց նրան Ստոկհօլմից վերադարձին մտնել Բերլին և կարդալ իր զեկուցումը մի շարք հրապարակական զեկուցումների շարքում։ Անտրպրէնիօրը աշխատում է գրաւել Տօլստօյին՝ կտրական կերպով երաշխաւորելով որ «Բերլինի ոստիկանութիւնը գրաքննութեան չի ենթարկի համաշխարհային հանճարի դատողութիւնները և չի խանգարի նրան միլիտարիզմի կլասիքական երկրում ազատ յայտնելու իր կարծիքները պատերազմների և միլիտարիզմի դէմ»։ Ձեռնարկողներն առաջարկում են Տօլստօյին 5000 ֆրանք իւրաքանչիւր դասախօսութեան համար։ Եթէ Տօլստօյ համաձայնվի մասնակցել 10 կոնֆերենցիաներին, նրան խոստանում են միանուագ աւանս տալ ամբողջ 50,000 ֆրանկը։ Տօլստօյը քաղաքավարի, բայց կտրական կերպով մերժեց այդ առաջարկութիւնը, մատնացոյց անելով Բերլինում ապրող իր մի համախոհի վրա պատերազմի հարցերում, որը «իրանից վատ չի կարդայ դասախօսութիւնը միլիտարիզմի մասին»։

— Սակայն Բերլինի իմ բարեկամին 5000 ֆրանկ չեն վճարիլ,—վերջում ասաց ժպտալով Լեվ Նիկոլաեվիչը։

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ղօչան, 13 օգոստոսի

Նախորդ թղթակցութեանս մէջ յայտնել էի Մէշէդից այստեղ եկած կամաւորների մէջ ծագած խռովութիւնների մասին։

Այդ անսպասելի խռովութեան պատճառը հետևեալն է։

Քանի օր առաջ այստեղ հասած Միրզա Բաբայի (կովկասցի թուրք) հրամանատարութեամբ 100 հոգուց բաղկացած մի խումբ պարսիկ կամաւորների շարքում գտնվում էին նաև 5 հոգի հայեր։

Այդ խումբը քաղաքս հասած օրից աւազակութիւններով էր պարապում և միաժամանակ խեղճ խանութպաններից գնած իրերի և նոյնիսկ հացի դրամը չէր վճարում։

Հայ կամաւորները ի նկատի ունենալով այդօրինակ ոտնձգութիւնները և հակայեղափոխական քայլերը պարսիկ կամաւորների կողմից՝ շտապում են հրամանատարի մօտ, պարսիկ կամաւորների այդօրինակ վարմունքի դէմ բողոքելու համար։ Խնդրին սուր կերպարանք չը տալու նպատակով հրամանատարը յատուկ մարդիկ է ուղարկում բազար, կամաւորների պարտքը վճարելու համար։

Սակայն հայ կամաւորները մի քանի կէտից բաղկացած մի կանոնագիր են դնում հրամանատարի առաջ և առաջարկում նրան, որպէսզի յետագայում յիշեալ անախորժութիւնների նման դէպքեր չը պատահեն, ընդունել և գործադրել տալ։ Այլապէս հայերը ստիպված կը լինեն զէնքերը ցած դնել։

Խմբի հրամանատարի և հայ կամաւորների մէջ համաձայնութիւն չը կայանալով հայերը զէնքերը ցած են դնում և անմիջապէս թողնում հեռանում։ Այդ օրինակին հետևում են նաև կովկասցի ութ կամաւորներ, որոնք խմբի մէջ լաւ ույժեր էին նկատվում։ Միրզա Բաբան մնացած կամաւորներին հաւաքելով անցեալ երեկոյեան գիշերով ուղևորվում է դէպի Դարագեազի գաւառը՝ հետը տանելով բաւականաչափ զէնք, ռազմամթերք և ռումբ։

Սակայն ճանապարհված խմբի մէջ վերոյիշեալ կոնֆլիկտի պատճառով խռովութիւն է ծագել և խումբը մասամբ է նախքան Դարագեազ հասնելը ցրվել։

Նշանաւոր աւազակ Ղուլամ Ալի Լօոը մօտ ժամանակներս՝ իր մի քանի ձիաւորներով եկել է Ղօչանի շրջանը։ Քաղաքիս դատաւորը և տեղական անջումանը այդ մասին տեղեկանալով անցեալ օրը մօտ 50—60 հոգուց բաղկացած մի խուզարկու խումբ են ճանապարհել դրսերը՝ հետապնդելու այդ աւազակապետին։

Ամսիս 12-ի լոյս 13-ի գիշերվայ մօտ ժամը 1-ին լսվեց ուժեղ հրացանաձգութիւն։

Առաւօտեան պարզվեց, որ հրացանաձգութիւնը Թայֆայական հողի վրա է տեղի ունեցել յեղափոխական մուջահիդների պարագլուխ Միրզա Թաղի խանի և ոմն սէիդի միջև. պատճառների մասին առ այժմ յայտնի չէ. մարդկային զոհեր չը կան։

Իքս

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԾԵՐ, ՆԵՐԿԵՐ

IV

Կայ մի միջոց, որով մենք ապահովում ենք մեր կուլտուրական հաստատութիւնները, դպրոցները։

Դա ողորմութիւնն է։

Մինչև այժմ դա միակ միջոցն է համարվում և ուժեղ կերպով գործադրվում է զանազան կոչերով, դիմումներով և միևնոյն ժամանակ պախարակելով հասարակութեան քար անտարբերութիւնը։

Եւ իրաւ՝ հասարակութիւնը սկսել է քար անտարբերութիւն ցոյց տալ, և այն բազմաթիւ կոչերը, դիմումները, որոնք լոյս են տեսնում մամուլի մէջ դրամի, գրքի պահանջներով, շատ անգամ մնում են անուշադիր, նոյնիսկ անախորժ զգացմունք յարուցանում մարդկանց սրտերում։

Ահա տեսնում ես՝ մի-երկու մարդու խելքին փչեց ընթերցարան-մատենադարան բանալ. խօսք չը կայ, որ լաւ, գեղեցիկ միտք է։

Եւ չը գտնելով ոչ մի ուրիշ միջոց, նիւթական աղբիւր՝ դիմում են լրագրի միջոցով հայ հեղինակներին կամ մասնաւոր մարդկանց՝ գիրք, դրամ ուղարկել իրանց։

Ի հարկէ հայ հեղինակը, որ և գիրքն է գրում, և հրատարակում է իր գիրքը, ակամայ պիտի գոչէ. «Քանի՞ կաշի ուզում էք քերթել ինձանից»։

Փոխանակ ձրի, ողորմութեամբ հայ հեղինակներից գիրք հաւաքելու, շատ լաւ կանէին նախ՝ ընթերցարան-մատենադարան բացողներն իրանց դրամը մէջտեղ հանէին և ապա հայ հեղինակներից գնէին փարայով գրքեր, որով թէ օգնած կը լինէին հայ հեղինակին՝ գրքերը վաճառելու և թէ պատւաբեր կերպով մի փոքրիկ կուլտուրական կորիզ ձգած կը լինէին։

Գալով մեր միւս կուլտուրական հիմնարկութիւններին, գլխաւորապէս դպրոցին, նոյնպէս ողորմութեամբ, զանազան կոչերով պահելու ձգտումը գտնում եմ կատարելապէս անպատւաբեր և անհիմն։

Ողորմութեամբ շատ հեռու չես գնայ. ողորմութիւնը այսօր կայ, վաղը չը կայ. այսօրվայ տուողը, վաղը երես կը դարձնէ։

Ուրիշ բան է, երբ դրամ շատ ունեցողները դպրոց են բաց անում, կամ խոշոր նուիրաբերութիւն անում, թէկուզ ինքնաբերաբար մէկը իր դահեկանն է տալիս դպրոցի մի քարը տաշելու, կամ մի կոտրած ապակին շտկելու։

Դա ազատ, ինքնուրոյն զգացմունքից բղխած արտայայտութիւն է, օգնութիւն է։

Բայց ուրիշ բան է բօշայութեան հասած ձեռք կարկառելը դպրոցի կամ մի այլ հաստատութեան համար։

Անշուշտ կասէք. «Բայց ի՞նչ անենք. ցոյց տուէք ուրիշ ռացիօնալ միջոց»։

Կը պատասխանեմ դրան, որ միջոցներ շատ կան, միայն դրանք զանազան կոչերի, դիմումների սահմաններից շատ հեռու են և պահանջում են աշխատանք, ջանք, թերևս սկզբնական նիւթական զոհաբերութիւն։

Գլխաւորապէս գիւղերը, որոնց օգնութեան են դիմում դպրոցի համար, շատ լաւ կարող են այդ օգնութիւնը պատւաբեր կերպով կազմակերպել իրանց հէնց գիւղում, առանց աւելորդ նիւթական զոհաբերութեան։

Գիտեմ գիւղեր, որոնք ունեն դպրոց հոգեվարք վիճակում նիւթական միջոցների սղութեան պատճառով։

Ջունեն այդ գիւղերը խանութներ, ապրանք են առնում կամ մօտակայ քաղաքից, կամ գիւղաքաղաքից, կամ հրէայ չարչիներից, շատ անգամ զարհուրելի կերպով խաբվելով։

Թողնում եմ և այն տաժանելի և միևնոյն ժամանակ, տրագիկական դրութիւնը, որ տասը կօպէկի նաւթ առնելու համար գիւղացին ցեխին, ցրտին վազում է 7—8 վերստ հեռաւորութեան վրա գտնված խանութը։

Բայց փորձեցէք ասելու այդ գիւղացիներին բանալ մի խանութ դպրոցի օգտին։

Եւ ասէք, որ դպրոցի խանութը և էժան ապրանք կը տայ ձեզ և ձեր տուած օգուտը կը մնայ ձեր դպրոցին՝

Կը հակառակեն, չեն ուզենայ։

Շատերը ուղղակի հայ մարդու նախանձից դրդված՝ կառարկեն, թէ ինչո՞ւ դպրոցը պիտի օգտվի և ոչ իրանք։

Շատերը, կանայք նամանաւանդ, կը հակառակեն, որովհետև չարչիները ապրանք են փոխում ձուով, հաւով, ցորենով, իսկ խանութը, այն էլ դպրոցի խանութը, այդ չի անի։

Եւ կանայք, որոնք, ծածուկ՝ իրանց տանու մարդկանցից, տան բարիքը փոխում են չարչու տուած մի փտած կտորի, կամ մի

մեծ գործ։

Արհեստանոցները բացված են երեք ամսով մինչև սեպտեմբեր։

Եթէ լինէին դրամական միջոցներ, մենք կարող էինք շարունակել նրանց գործունէութիւնը նաև աշնան ու ձմեռվայ ամիսներում։

Բայց իւրաքանչիւր նոր ամիս պէտք է նոր ծախքեր պահանջի, և եթէ ցանկանայինք շարունակել նրանց գործունէութիւնը մինչև յունվար, տալով բոլոր գիւղերին միայն երկ-երկու տորք իրանց պարագաներով, բաւականաչափ թել և միևնոյն ժամանակ պահել ամբողջ շրջանի 13 գիւղերի համար գոնէ 4 ղեկավար վարպետ կամ վարպետուհի, հարկաւոր կը լինի բացի ծախսածից մօտաւորապէս 1500 ր. փող։

Անշուշտ, եթէ գտնվեն նուիրատուներ, որոնք տան այդ գումարի կէսը, երրորդ կամ չորրորդ մասը, կարելի կը լինի իրագործել ծրագրի գոնէ մի որոշ մասը։ Այդ էլ բան է։

Իսկ եթէ գտնվեն կուլտուրական գործի ջատագովներ և հնարաւորութիւն տան արհեստանոցները պահելու մինչև հետևեալ ամառ, այսինքն վերցնեն իրանց վրա ծախք մօտ 2500 ր., այն ժամանակ մենք կարող կը լինէինք մի լուրջ կուլտուրական փորձ անել և մի անգամից առաջ գցել արհեստագիտական մի շարք խնդիրների գործադրութիւնը և որոշել նրանց իրական արժէքը և նշանակութիւնը գիւղական այս շրջանում։

Հաջի-Խալիլում հետաքրքրվեցի և հետևեալ գործով։

Դեռ անցեալ տարվանից ես լսել էի, որ Աբարանպօլի շրջանում բուսնում է լաւ յատկութեան ջիլ խոտ ճահճային տեղում և որ այդ խոտից գիւղացիները պատրաստում են խսիրներ։ Ես որոնում էի այդ խոտը, մանաւանդ որ զամբիւղագործութեան համար մեզ հարկաւոր էին զանազան տեսակ նիւթեր։

Գիւղական գրագիր Ա. Նիկողոսեանը խոստացաւ իսկոյն բերել գիւղից և արդարև բերեց մի փունջ։ Նա տուեց երկու տեսակի խոտի նմուշ։ Ես թագցրի պայուսակում, որպէսզի յանձնեմ զամբիւղագործութեան վարպետ Սորշենիցկուն Ղարաքիլիսայում։

Ա. Նիկողոսեանը առանձին ուշադրութեամբ հետևում է թէ ջուլհակութեան և թէ կաթնատնտեսութեան։ Իրանց «խաբի» կամ կաթնատնտեսական խմբակի կաթը նա ինքն է մշակում սերզատ գործիքի միջոցով։

Հաջի-Խալիլից մենք ճանապարհվեցինք դէպի Բեշիշքեանդ։ Մեր ձախ կողմն վրա մնացին Ղըրխդագիրման և Աղզուլա գիւղերը, ուր բացված են արհեստանոցներ և առաջ են գնում աջողութեամբ։

Ճանապարհը դէպի Բեշիշքեանդ անցնում էր ցանած դաշտերով և արդէն քաղած խոտհարքերով։ Գարին հասել և հասնում էր։ Ցորենը դեռ պահանջում էր մի քանի ժամանակ ևս, որպէսզի հասկերը լցվեն։

Երկինքը պայծառ էր։ Օդը տաք էր և կազդուրիչ։ Լեռնային բարակ զեփիւռը զովացնում էր այստեղի ամառվայ շոգը։

Ա. Քալանթար

(Վերջը միւս անգամ)

---

*) Զէյթունը գտնվում է Մարաշի գաւառում։

սալոնի կտորի վրա, այսօր ներկայանում են ամենաթունդ ռէակցիօներները դպրոցական խանութի վերաբերմամբ։

Փորձեր՝ բանալու այդ տեսակ խանութներ՝ եղել են։

Բայց դպրոցի շուրջը խմբված սրտացաւները ամեն ջանք պիտի գործ դնեն այդ տեսակ խանութներ բանալու։

Ես հաւատացած եմ, որ այդ խանութները յամենայնի կարող են ապահովել մեր դպրոցները։

Կան և ուրիշ միջոցներ ողորմութեան կոչի, դիմումների սահմաններից դուրս. հարկաւոր է միայն ջանք, աշխատանք, իսկ լրագրներում տպել կոչեր, դիմումներ՝ դա շատ հեշտ և անզբաղ միջոց է և ոչ մի հիմնաւոր օգուտ չէ կարող տալ դպրոցին, կրթական գործին։

Դիմումը, կոչը միտք ունի և անհրաժեշտ է գուցէ արտակարգ հանգամանքներում և պայմաններում, օրինակ սովի, հրկիզի, կոտորածի (օրինակ՝ Ադանայի կոտորածը) դէպքում, իսկ դպրոցը կոչերով և ողորմութեամբ չէք ապահովի, և դպրոցն ինքը երես է դարձնում ողորմութեան առանցքի շուրջը պտտող կուլտուրական առաջախաղացութիւնից։

Դպրոցը պահանջում է աշխատանք և եռուն, խելացի, մշտական գործունէութիւն։

Իսկ «ողորմութիւն արէք, աղա ջան» խօսքերով հեռու չի գնայ այն հաստատութիւնը, որը եկել է մեր միջից վերացնելու աղքատութիւնը, անգործութիւնը և բօշայութիւնը։ Յակ. Գենջեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Երևան, 25 օգոստոսի

Այսօր, մօտ ժամը 4-ին, օրը ցերեկով Երևանում տեղի ունեցաւ հետևեալ ցաւալի դէպքը, որը պատմում են այսպէս. երկու հոգի գնում են Բէհբութեան փողոցում գտնված Համազասպ Տէր-Մկրտչեանի բնակարանը սենեակներ վարձելու նպատակով։ Երբ վերոյիշեալ Համազասպը ընկած առաջ ցոյց է տալիս իր քրէհով տրվելիք սենեակները և բացատրում է սենեակների լաւութիւնները և յարմարութիւնները, երկու չարագործները յարմար առիթից օգտվելով կացնի մի քանի հարուածով տեղն ու տեղը սպանում են նրան ու դուրս գալով բակը և ապա փողոց՝ սկսում են փախչել։ Սպանվածի կնոջ և տան եղողների աղաղակներին Թաղական ոստիկանը և ուրիշ մարդիկ ընկնում են մարդասպանների քամակից։ Չարագործները, տեսնելով որ ոստիկանը մօտենում է իրանց և կարող են ընկնել նրա ձեռքը, ատրճանակով սպանում են դրան և շարունակում են իրանց փախուստը։ Այդպէս փախչելով անցնում են Նազարեան փողոցը և այդտեղ շրջապատվում են ոստիկաններով, և վերջիններիս աջողվում է մէկին գնդակահարել. մի քանիսն էլ ասում են, որ սպանված չարագործը երբ տեսնում է որ շրջապատվել է արդէն, ինքն է իրան խփում. իսկ միւսին ձերբակալում են։ Ինչպէս լսեցինք, չարագործները հայեր են և Համազասպի սպանութիւնը թշնամութեան արդիւնք է եղել։ Առայժմ այսպէս է խօսվում հասարակութեան մէջ. երևի ոստիկանութեան և քննիչի հարց ու փորձը և նրանց արած արձանագրութիւնը ցոյց կըտայ, թէ ինչ հողի վրա է տեղի ունեցել այդ սպանութիւնը։ Սպանված Համազասպը, ասում են, ունի 4—5 երեխաներ։ Նամակս կնքելիս լսեցի, որ ոստիկանը ոչ թէ սպանված է, այլ ծանր վիրաւորված։

Ատրպատականի առաջնորդ Կարապետ ծ. վարդապետը Վեհափառի հրամանով հեռագրով կանչվել է Էջմիածին։ Թէ ինչի համար է կանչված, առ այժմ յայտնի չէ։

Կովկասի առման 50-ամեակը այստեղ ևս տօնվեց։ Ռուսաց մայր տաճարում մաղթանք տեղի ունեցաւ, որտեղ հրաւիրված էին տեղիս թեմ. առաջնորդական փոխանորդը կ.նսիստօրիայի անդամների հետ։ Երեկոյեան լուսավառութիւն տեղի ունեցաւ։ Գ. Աղազադեան

—

Դուշէթ, 25 օգոստոսի

Այսօր, օգոստոսի 25-ին, այստեղ մեծ շքով տօնվեց Արևելեան Կովկասի նուաճման 50-ամեայ յօբելեանի տօնը։ Քաղաքը այդ օրը տօնական կերպարանք էր ստացել, զարդարվել էր դրօշակներով և խանութները փակ էին։ Պատարագից յետոյ հրապարակի վրա հաւաքվեցին ժողովրդի մեծ բազմութիւնը, համքարական դրօշակներով և զուռնայով, ու այստեղի զօրքը։ Հանդիսաւոր մաղթանք կատարեցին ռուս և հայ հոգևորականութիւնները, որից յետոյ կայացաւ քաղաքային այգում հանդիսաւոր ճաշ քաղաքային ինքնավարութեան կողմից։ Ճաշին հրաւիրված էին Դուշէթի բոլոր զինուորականները, գաւառապետը, երկու հայ քահանան, քաղաք. վարչութ. ամբողջ կազմը, քաղաքացիներից շատերը։ Գաւառապետը առաջին կենացը առաջարկեց Թագաւոր Կայսրի արևշատութեան համար, այնուհետև առաջարկվեցին Փոխարքայի, զօրքի և այլ կենացները. խմեցին հոգւոյ թասը և այն բոլոր զինուորականների, որոնք Շամիլի դէմ պատերազմելու ժամանակ զոհվեցին։ Գաւառապետը ի միջի այլոց շեշտեց, որ ֆանատիկ լեռնականների դէմ կռիւ մղելը որքան որ քաջութեան շնորհիւ էր, նոյնքան և քաղաքակրթութեան.

Ճաշից յետոյ բոլոր հրաւիրվածները լուսանկարվեցին, որից յետոյ կայացաւ հրապարակի վրա քաղաքիս երիտասարդների կողմից հրացանաձգութեամբ ձիարշաւ, որ այստեղ կոչվում է «զօղաօբա»։ Երեկոյեան քաղ. այգին լուսաւորված էր։

Այս տարի մեր գաւառի ցորենի բերքը երաշտի պատճառով միջակ եղաւ, տեղ-տեղ միջակից էլ ցածր։ Մեծ մասը արդէն կալսել ամբարել են ցորենը, իսկ լեռնոտ վայրերում դեռ ևս չեն հաւաքել։ Դժբաղդաբար հողի պակասութեան պատճառով շատ քչերն ունեն ամբողջ տարվայ հացը, կանցնեն մի քանի ամիս և գիւղացիները կը սկսեն ալիւր գնել թանգ գնով, որը նրանց ամենամեծ դժբաղդութիւնն է։ Յ.-կ քահ.

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Օգոստոսի 26-ին կովկասեան զինուորական-նահանգական դատարանում վերջացաւ յայտնի աւազակներ Պօղոս Դալաքօվի և Նիկոլայ Շավերդովի գործի քննութիւնը։

Զինուորական-նահանգական դատարանը Պօղոս Դալաքօվին մեղաւոր ճանաչեց և դատապարտեց մահվան պատժի կախաղանով, իսկ Նիկոլայ Շավերդովին արդարացրեց։

ՀԱՑԻ ԿՏՈՐ ԶԷՅԹՈՒՆՑՈՒՆ

Ստացանք Թիֆլիսում մի անձից մի օրինակի գին 2 ր.։

Այս գրքի վաճառումից մինչև օրս մեզ մօտ հաւաքված է 42 ր. 20 կ.։

ՅՕԳՈՒՏ ԱԴԱՆԱՑԻՆԵՐԻ

Մեր խմբագրութեան մէջ գտնվող եապօնական պատկերների վաճառումից մինչև օրս ստացվել է 11 ր. 20 կ. որպէս 19 նըկարի գին։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Հաստատ աղբիւրից տեղեկանում ենք, որ Էջմիածինը շուտով հրատարակելու է ժամանակաւոր հրահանգ հայոց եկեղեցական-ծխական դպրոցների կառավարութեան համար մինչև վերջնական ծրագրի հրատարակութիւնը։

◆ Ֆրանսիացի հայագէտ Ֆրեդերիկ Մակլէրը, որ պարապում էր Էջմիածնում հայ ձեռագիր աւետարանների համեմատութեամբ, շուտով կը գայ Թիֆլիս և կը մեկնէ Պարիզ։ Յարգելի գիտնականին աջակցում է Յուսիկ արքեպիսկոպոսը։

◆ Թիֆլիսում հեռագրական լուր է ստացվել, որ Թիֆլիսի նախկին քաղաքագլուխ Ալէքսանդր Մատինեան վախճանվել է Պարիզում և թողել է իր բոլոր կարողութիւնը Թիֆլիս քաղաքի բարեգործական կամ կրթական նպատակով։ Այդ կարողութիւնը 100,000 րուբլուց աւելի է։

◆ Հայ-վրացական համագումարի նախապատրաստական մասնաժողովը իր առաջի նիստում, որ տեղի ունեցաւ չորեքշաբթի, օգոստոսի 26-ին, որոշեց հրաւիրել համագումարը 1900 թւի յունիսի սկզբին։ Համագումարի առարկաներն են լինելու լեզուագիտութիւն, պատմութիւն և գրականութեան պատմութիւն։

◆ Թիֆլիսի նահանգական ազնուականութեան պարագլուխ իշխ. Թումանովը, ի պատասխան Կովկասի Փոխարքային ուղարկած շնորհաւորական հեռագրի վրաց ազնուականութեան կողմից Արևելեան Կովկասի գրաւման 50-ամեայ յօբելեանի առիթով, Գոմբրից ստացաւ հետևեալ պատասխան-հեռագիրը. «Թիֆլիս, ազնուականութեան պարագլուխ իշխան Թումանովին. Սրտագին շնորհակալ եմ ձեզնից և վրաց ազնուականութիւնից շնորհաւորանքի համար։ Հեռագիրը Նորին Մեծութեանը ուղարկեցի։ Կոմս Воронцов-Дашков»։

◆ Թիֆլիսի նահանգապետը ոստիկանապետի անունով ուղարկել է մի հրաման այսպիսի բովանդակութեան. «Պարտականութիւնս եմ համարում շնորհակալութիւն յայտնել ձեզ և ոստիկանութեան պաշտօնեաներին օգոստոսի 25-ին օրինական կարգ ու կանոն պահպանելու համար թէ փողոցներում և թէ զուարճատեղիներում հոծ բազմութեան ներկայութեամբ։ Նահանգապետ Լօզինսկի»։

◆ Երէկ գիշեր Թիֆլիսից մեկնեց դէպի Ախալցխայի գաւառը այնտեղի արօտների ուսումնասիրութեան համար Ալ. Քալանթար, որը միևնոյն ժամանակ պէտք է զբաղվի կաթնատնտեսական ինստրուկտօրութեան կազմակերպութեան խնդրով։

◆ Թիֆլիսում բացվելիք Արամեան հիւանդանոցի գլխաւոր բժշկի պաշտօնի համար ի միջի այլոց խնդիր է ներկայացրել Կամիշլավի զինուորական հիւանդանոցի գլխաւոր բժիշկ Մուլտանովսկին։

◆ Այսօր Թիֆլիսի քաղաքային շինութեան մէջ տեղի կունենայ դպրոցական մասնաժողովի նիստը, ուր խորհրդակցութեան նիւթ ծառայելու է 6 հայ, 4 վրացի և 1 ռուս վարժուհի ընտրելու խնդիրը քաղաքային բացվելիք դպրոցների համար։

◆ Ներսիսեան դպրոցի ուսուցիչ Ա. Աբեղեանին ձերբակալելու օրն և եթ բաց են թողել։

◆ Ինչպէս հաղորդում է «Закавказье» օրաթերթը, այն միջնորդութեան առիթով, որ եղաւ Թիֆլիսի ռուս հայրենասիրը. ընկերութեան կողմից ռուսաց սինօդին այն մասին, որ Վրաստանի հանգուցեալ էկզարխ Նիկոնը դասվի սրբերի շարքում, ստացվել է սինօդի հետևեալ կարգադրութիւնը. ամեն շաբաթ օրը պատարագ մատուցանել հանգուցեալ հովւապետի յիշատակին և պատուիրագրել ամբողջ էկզարխութեանը, որպէսզի ամեն տարի մայիսի 28-ին էկզարխ Նիկոնի սպանութեան օրը ամենուրեք պատարագներ մատուցվեն։

◆ Օգոստոսի 26-ին պրոֆ. Մառը այցելելով Հայոց Ազգագրական Ընկերութեան գրադարանը՝ խոստացաւ միջնորդել, որ Ռուսաց Գիտութեանց Ճեմարանը, հնագիտական և այլ գիտական ընկերութիւնները փոխանակեն իրանց հրատարակութիւնները «Ազգագրական Հանդէսի» հետ։ Այսպիսով ուրեմն, Հայոց Ազգագրական Ընկերութեան մասնագիտական գրադարանը, շատ հաւանական է, որ կարճ միջոցում ձեռք բերի գոնէ ռուսական գրեթէ բոլոր գիտական հրատարակութիւնները։

◆ Մեզ խնդրում են տպել հետևեալը. «Անիի այս տարվայ պեղումները վերջացնելուց յետոյ պրոֆէսոր Մառը մի երկու օրով ժամանեց Թիֆլիս և այստեղից ամսիս 26-ին գնաց Լազիստան (Թիւրքիա) մի ամսով գիտնական նպատակով։ Թիֆլիս եղած ժամանակ յարգելի պրոֆէսորը վրացի և հայ ինտելիգենցիայից մի քանի մարդկանց հետ խորհրդակցեց և նախաձեռն եղաւ Կովկասում հայ-վրացական լեզուագիտութեան և պատմութեան պարբերական համագումարներ սահմանելու։ Յարգելի գիտնականի միտքը ոչ միայն համակրելի է այլ և ժամանակակից։ Համագումարները գիտութեանց ակադեմիայի հովանաւորութեան տակ դնելու համար կարևոր խնդիր պիտի յարուցվի։ Կարծում ենք, որ հայ և վրացի ինտելիգենցիան ոչ մի ջանք չը պէտք է խնայի պրոֆէսորի գաղափարը իրագործելու համար։ Իր ժամանակին կը յայտարարվի ի հարկէ թէ ում և ուր պիտի դիմեն այն բոլոր անձինք, որոնք կը կամենան օգտակար լինել գործին»։

◆ Գօրից, առաջնորդական փոխանորդ Սիօն վարդապետը խնդրում է մեզ յայտնել ի գիտութիւն «Հովիւ» թերթի ընթերցողների, որ այլևս չը սպասեն յիշեալ թերթում իրանից գրված որևէ յօդուածի, իր պահանջմամբ նա յետ է ստացել թերթի խմբագրութիւնից իր բոլոր յօդուածները։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. Դերբենտի ճիւղի վարչութիւնը մեզ գրած մի նամակով իր շնորհակալութիւնն է յայտնում այն բոլոր տիկիններին, օրիորդներին և պարոններին, որոնք թէ նիւթապէս և թէ բարոյապէս օժանդակեցին յօգուտ ճիւղի օգոստ. 2-ին կայացած զբօսանքի աջողութեան։

◆ Շուշում, Ամենափրկիչ եկեղեցու ծխականների ընդհանուր ժողովը երեսփոխան է ընտրել Մովսէս Իզրաշեանին։

◆ Կօջօրից, խմբապետ Բ. Բեբինեան խնդրում է մեզ յայտնել, որ յօգուտ չքաւոր երգիչ Մ. Կրասնիկեանի ամսիս 16-ին հանգանակվել է Գ. Սագինեանի միջոցով 23 ր. 50 կ. և յանձնվել նրան։

◆ Իգդիրում օգոստոսի 21-ին բանտարկվել են 2 էվջիլարցիներ, որոնք սպանել են ս. Կարապետ վանքի վանահայր Բաղդասար վարդ. Բաղդասարեանին։ Ոճրագործները 3 հոգի են եղել, մէկը՝ գաղթական, որ փախել է, իսկ երկուսը՝ վարդապետի հայրենակիցներ։ Շնորհակալութեան արժանի են առաջին մասի պրիստաւ Իգնատիևը և գաւառական քննիչ Քիչերին, որոնք սաստիկ հալածում են խուլիգաններին և ոճրագործներին։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Մեծ սենսացիա գործեց Պետերբուրգում ինժեներ-տեխնօլոգ Պօզօրէզովի կալանաւորութիւնը։ Պօզօրէզով էլեկտրօ-տեխնիկական կառուցումների գործատան տէր է և ծառայում է Չինական-արևելեան երկաթուղու վարչութեան մէջ, ստանալով ռոճիկ մօտ 10 հազար րուբլի։ Օգոստոսի 18-ին Պետերբուրգի 1-ին քաղաքամասի ոստիկանատանը տէլէֆօնով հաղորդեցին պետական խնայողական կասսայից, որ այնտեղ եկաւ մի լաւ հագնված պարոն՝ խնայողական տետրակի մէջ մտցնելու 300 րուբլի։ Մանրացնելու համար եկողը ներկայացրեց 500 րուբլիանոց թղթադրամ։ Թղթադրամի թւահամարը համեմատելով այն թղթադրամների ցուցակի հետ, որոնք յափշտակված էին Թիֆլիսում դրամական տրանսպօրտի մէջ, կասսայի կառավարիչը տեսաւ, որ ներկայացված թղթադրամի թւահամարը յափշտակվածների թւումն է գտնվում։ Դրամարկղն եկած գնդապետ Կրիլովին անյայտ պարոնը յայտնեց, որ ինքն ինժեներ Պօզօրէզովն է, և իր յետագայ բացատրութիւնների մէջ մատնացոյց արեց իր նիւթական դրութեան վրա, նոյնպէս և իր բնակութեան տեղի վրա, աւելացնելով որ նա այժմ ապրում է ամարանոցում՝ Գանզէնբուրգում։ Այն հարցին, թէ ինչպէս է այդ թղթադրամը նրա ձեռքն ընկել, Պօզօրէզով բացատրեց, որ այդ թղթադրամը նա ստացաւ արևելեան-չինական երկաթուղու վարչութեան մէջ այն ուրիշ դրամների թւում, որ իրան պէտք է տրվէին որպէս ռոճիկ։ Ի նկատի ունենալով գործի լըջութիւնը, ինժեներ Պօզօրէզով, չը նայելով որ նա ներկայացրեց վկայական իր ով լինելու մասին, հրաւիրվեց ոստիկանատուն, իսկ այնտեղից ուղարկվեց գաղտնի ոստիկանութեան վարչութիւնը։ Ոստիկանապետի պաշտօնակատարը յանձն առաւ անձամբ կատարելու քննութիւնը և անհրաժեշտ ձևականութիւնները կատարելուց յետոյ արձակեց Պօզօրէզովին։ («Бирж. Вѣд.»)

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՑԵՊՊԵԼԻՆԻ ԹՌԻՉՔԸ ԴԷՊԻ ԲԵՐԼԻՆ

Ցեպպելինը կատարեց կայսրին և բերլինցիներին տուած խօսքը։ Հարաւային և Միջին Գերմանիայի բոլոր խոշոր քաղաքներն այցելելուց յետոյ հերթը հասաւ և գերմանական մայրաքաղաքին։ Առաջուց նշանակված էր այդ ուղևորութեան օրը. առաջուց Բերլինի բոլոր լրագիրներում տպված էր Բերլինի յատակագիծը և նրա մէջ նշանակված էր օդակամման ծուռը գիծ, որի ուղղութեամբ պէտք է օդապարիկը թռիչք գործէր Բերլինի վրա։ «Ցեպպելին III» օդային նաւը, որը նորերս կառուցված էր Ֆրիդրիխսհաֆէնում, պէտք է Բերլին ժամանէր շաբաթ։ Մեզ մօտ տպված հեռագիրներից ընթերցողը արդէն գիտէ, որ այդ պայմանաժամը չաջողվեց իրագործել։

Բարձրանալով Բօդէնեան լճից ուրբաթ, առաւօտեան $4^1/_2$ ժամին, օդապարիկը մինչև Նիւրնբերգ տանող ճանապարհի վրա, ընկվեց մօտորի փչանալու պատճառով և իջաւ 11 ժամին Նիւրնբերգից դէպի հարաւ, իսկ ապա երկրորդ անգամ, ցերեկվայ մօտ 4 ժամին արդէն հէնց իրան՝ Նիւրնբերգում։ Այնտեղ նա ընկած մնաց մինչև գիշերվայ 2 ժամը։ Այդ ժամանակամիջոցում հասցրին նոր մօտօր, որի օգնութեամբ թռիչքը վերսկսվեց։ Շաբաթ օրվայ ընթացքում օդապարիկը, փոխանակ արդէն նշանակված տեղը հասնելու, զօրեղ քամու հակառակ դանդաղ շարժվում էր դէպի հիւսիս. նա այս անգամ էլ մի նոր թեթև վնասուածք ստացաւ, այն է՝ կոտրվեց երկու պտուտակներից մէկը. և երեկոյեան $6^1/_2$ ժամին իջաւ Բիտտէրֆիլդում։ Այդ իջնումը նախատեսված էր, որովհետև այստեղ սպասում էր օդապարիկին ինքն Ցեպպելինը, որը միայն նորերս կազդուրվել էր հիւանդութիւնից և այդ պատճառով միայն մասնակցել կարողացաւ օդապարիկի թռիչքի վերջին մասին։ Միմիայն մի պտուտակ գործադրելով, որովհետև կարկատումը շատ ժամանակ կը խլէր և չէին կամենում երկրորդ անգամ հիասթափեցնել սպասող կայսրին և բերլինցիներին, օդապարիկը կիրակի, մօտ կէսօրին, այսինքն մի օր ուշանալուց յետոյ, հասաւ իր նպատակակէտին, կատարեց առաջուց գծագրված «մանեօվրները» քաղաքի վրա և իջաւ Տէգելեան հրապարակը։ Նոյն օրն երեկոյեան նա արդէն սկսեց վերադառնալ։ Գիշերը նա նոր անաջողութիւն ունեցաւ, և, թռչելով համեմատաբար փոքր տարածութիւն, նա ստիպված էր իջնել Վիտտէնբէրգի մօտ, այս անգամ աւելի ևս հիմնաւոր կարկատան անելու։

Այդ թռիչքը, ասում է «Русск. Вѣд.» լրագիրը, ցոյց է տալիս, որ երբ միջոցներ և ազատ ժամանակ լինեն, օդապարիկներն ընդունակ են հեռու ճանապարհորդութիւններ կատարել և հասնում են նպատակակէտին, բայց դեռ խօսք չէ կարող լինել ճանապարհորդական հաղորդակցութեան մասին օդի մէջ։

ՄԱՄՈՒԼ

Ինչպէս յայտնի է ընթերցողներին, 1904 թւի վերջից մինչև առաջին Դումայի վախճանը Ռուսաստանում երևացին բազմաթիւ նոր լրագիրներ, որոնք ներկայացնում էին հասարակական հոսանքների ամեն երանգները։ Յետագայի անաջող հանգամանքները դադարեցնել տուին դրանցից շատերին։ Մնացածներից մի քանիսը, ինչպէս «Страна», «Наша Жизнь», փակվեցին հետզհետէ նիւթականի պատճառով։ Բոլորովին վերջերս նոյն պատճառով դադարեց «Слово» առաջադէմ թերթը, որ խմբագրվում էր շատ տաղանդաւոր կերպով, ունենալով իր մշտական աշխատակիցների թւում խոշոր գրական անուններ։

Լրագրի այդ տեսակ փակումը, որպէս մի խոշոր հասարակական երևոյթ, չը խուսափեց «Вест. Евр.» ամսագրի ներքին տեսութեան բաժինը համօրէն կազմողի ուշադրութիւնից, որ անում է հետևեալ ուշագրաւ խորհրդածութիւնը.

«Եթէ հարկաւոր լինէր փնտռել մեր դըժնդակ ժամանակի յայտարարներ, եթէ նրանք աչքի չը զարնէին հասարակական շատ երևոյթների մէջ, ապա այդ դէպքում իրար ետևից փակվող լրագիրների վիճակը կարող կը լինէր նշանակութիւն ստանալ։ Ժողովրդական մասսան այլևս չէ կարդում լրագիր, մինչ նա հասարակական ոգևորութեան մատուր շրջանում կլանում էր տպագրական թերթերը։ Հազիւ թէ ժողովրդական մասսան այդ կարճ միջոցին կարողանար սովորել իր համար լրագիր կարդալու մշտական սովորութիւնը։ Բայց, այսպէս ասած, խօսքս ինտելիգենցիայի մասին է, որը սկսել է շատ քիչ կարդալ։ Ըստ երևոյթին օրէ-օր նրա մէջ թուլանում է հետաքրքրութիւնը դէպի քաղաքական-հասարակական երևոյթները։ Լաւ է դա թէ վատ, և որտեղ է այս երևոյթի սկզբնապատճառը, մենք առ այժմ չենք քննի։ Մենք վերցնում ենք լոկ փաստը։ Իսկ փաստը ասում է, որ ժողովրդական խաւերը կրկին դարձել են այն դրութեան, երբ լրագիրը նրան հարկաւորվում է թութունից պապիրօս կոլորելու համար, իսկ լրագրի սովոր ընթերցողները քաղաքական լուրջ լրագիրներից անցնում են փողոցային մամուլին և փոխանակ քաղաքական յօդուածների՝ իրանց ուղեղը սննդում են պիկանտ, պոռնկագրութեան մօտ գրութիւններով, տեղեկութիւններով, սաէ-կօսէներով։ Եւ այժմ քաղաքական լրագրի առաջ դրված է մի դիլեմա՝ կամ կերպարանափոխվել, կամ դադարել։ Ի պատիւ մեր լուրջ լրագրութեան պիտի ասել, որ նրանցից շատ քչերը փոխեցին իրանց դէմքը։ Բայց դրա փոխարէն այժմ գոյութիւն ունեն միայն նրանք, որոնք դեռ «ազատութեան օրերից» շատ առաջ ստեղծել են իրանց համար մշտական ընթերցողների մի կօնտինգենտ, կամ որոնք պահպանվում են պաշտօնական յայտարարութիւնների հասոյթներով, կամ ստանում են խոշոր նպաստներ»։

*

Թիֆլիսում հրատարակվող գերմաներէն «Կաուկազիշէ պօստ» շաբաթաթերթը կարճատև ընդհատումից յետոյ վերսկսվել է օգոստոսի 23-ից, նոր խմբագրական կազմով։

Չենք կարող չը նկատել, որ արդէն առաջին համարի բովանդակութիւնից երևում է փորձված խմբագրի և գրագէտի, նախկին խմբագիր Արթուր Լէյստի, բացակայութիւնը։ Ըստ երևոյթին նա այլևս չէ մասնակցելու իր հիմնած թերթի խմբագրութեանը։

Նոր խմբագրութիւնը յայտարարութեան ձևի մի յօդուածում հաղորդում է խմբագրի՝ դէպի կովկասեան գերմանական գաղութները կատարած ճանապարհորդութեան արդիւնքը՝ թերթը ապահովելու նպատակով։ Գաղութները տուել են և դրամական նըպաստներ և նոր բաժանորդներ։ Օգնութիւն է սպասվում և չայցելած վայրերից։

Շաբաթաթերթը խմբագրում է Ալէքսանդր Մօզլէր, պատասխանատու խմբագիրն է բարոն Ֆէօդոր ֆօն Դրախենֆէլս։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ*)

4. Ցամաքի վերին շերտը ես անուանում եմ գետին։ Իսկ պարոնը ասում է. «Հող անուանում ենք մենք երկրագնդի վերին շերտը»։ Հայերէնի բառապաշարից նպատակայարմար կերպով օգտվելը յանցանք է երևում պարոնի աչքում։ Ես տարբերում եմ հետևեալ բառերն իրարից. ցամաք (суша), հող (земля), երկիր (դարձեալ земля), երկրագունդ (земной шаръ)։ Ցամաքի վերին շերտը ես կոչում եմ գետին. դուք կարծում էք, որ գետին բառի փոխարէն պիտի գործածել հող. իսկ ես համոզված եմ, որ դուք չարաչար սխալվում էք, ասելով՝ «հող անուանում ենք մենք երկրագնդի վերին շերտը»։ Նախ՝ իմացած եղէք, պարոն, որ «երկրագնդի» վերին շերտը (գետինը) կարող է բաղկացած լինել ոչ թէ հողից, այլ և քարից կամ մի այլ բանից. հասկանո՞ւմ էք դրանց տարբերութիւնը։ Երկրորդ՝ ինչպէս թէ երկրագնդի վերին շերտն ենք անուանում հող. ինչ էք ասում, պարոն. մի՞թէ կարծում էք, որ «երկրագնդի» վերին շերտում միայն հող կայ, իսկ օրինակ ջուր՝ երբէք։ Ապա ո՞ւր էք տարել անհագին ովկիանոսները։ Բայց ոչ. դուք ուզել էք ասել՝ ցամաքի վերին շերտը, իսկ դուրս է եկել՝ երկրագնդի վերին շերտը։ Դէ ձեզ համար, երևում է, երկրագունդ, երկիր, ցամաք միևնոյն գաղափարն են արտայայտում։

5. Դուք շարունակում էք. «Ըստ փոխադրողի էլ, բլուր կարող են կոչվել նրանք, որոնք ծովի մակերևոյթից ոչ աւելի քան կէս վերստ բարձրութիւն ունեն»։ և ապլոմբով կցում էք. «Բլուրը ծովի մակերևոյթի հետ ոչ մի առնչութիւն չունի, այլ միայն նրա շրջապատն են ի նկատի ունենում բլուր անուանելու համար»։

Զարմանութեան, անբարեխղճութեան մի նմուշ է դա։ Պարո՛ն, ո՞րտեղ է տեսնված առաջ բերել մի դասագրքի մէկ նախադասութեան կէսը միայն, թերի՛ թողնել նրա միտքը և, այդպիսի ցիտատի վրա հիմնվելով, խծբծանքներ անել։ Պահանջում եմ նորից բաց անել իմ դասագրքի 12-րդ երեսը և կարդալ ձեր առաջ բերած կտորը ամբողջավին. ահա այն. «Հարթութիւնների վրա շատ անգամ հանդիպում ենք բլուրներ, որոնք այնպիսի բարձրութիւններ են, որոնք թէև մեծ չեն, բայց էլի նկատելի կերպով բարձր են շրջապատող տարածութիւններից, սակայն ոչ աւելի քան կէս վերստ ծովի մակերևոյթից կամ 100 սաժէն՝ իրանց շրջապատից»։ Անբարեխիղճ քննադատ, շրջապատ բառից էք խօսում և, դիտաւորեալ կերպով, զանց էք անում մէկ նախադասութեան մէջ երկու անգամ առաջ բերված «շրջապատ» բառը։

6. Դասագրքիս 14-րդ երեսում ասված է, որ լեռները լինում են սրածայր, գմբէթաձև և այլն. և այդ բանը ցոյց տալու համար զետեղել եմ մի նկար. պարոնը ասում է, որ ես աչքաթող անելով «իմ չոլս կողմը գտնվող հայ և վրացի եկեղեցիների գմբէթ-

---

*) Տես «Մշակ» № 187.

ների ձևը»՝ գմբէթաձև ասելով հասկացել եմ «սոխաձև»:

Մանկամիտներին միայն վայել խծբծանք: Պարոն, հասկանում էք դուք գմբէթ բառի նշանակութիւնը. ի հարկէ ոչ. գմբէթաձև ասելով դուք կարծում էք պիտի հասկանանք աւելի շուտ հայ և վրացի եկեղեցիների գմբէթների ձևը: Բաց արէք, պարոն, հայերէնի որևէ բառարան. գմբէթ բառի բացատրութիւնը կարդացէք այնտեղ և սովորեցէք, որ գմբէթը շինուածքի (ընդհանրապէս) վերին կիսագնդաձև, գոգաւոր մասն է (куполъ). չը լինի՞ տգիտաբար կարծում էք, թէ միայն եկեղեցիները կարող են լինել գմբէթաձև. ձեր կեանքում, աշխարհներ ման եկած պարոն, չէ՞ք տեսել թատրոններ և ուրիշ շէնքեր, որոնք գմբէթաձև լինեն: Բոլոր գմբէթաձև շինուածքների էլ ընդհանուր կազմի նկարն է բերած իմ դասագրքի մէջ. իսկ դուք այն անուանում էք, անհամ սրախօսութեամբ, «սոխաձև»: Սոխաձևն էլ չը գիտէք ինչ է. սոխ չէ՞ք տեսել ձեր կեանքում. միթէ սոխը և գմբէթը նոյն ձևն ունեն. իմանալ պարտաւոր էք, որ գմբէթը կիսագնդաձև, գոգաւոր է մի կողմից, իսկ սոխը ամբողջապէս գնդաձև է և գոգաւոր ամեն կողմից: Այդ բաները պիտէք, ի հարկէ, բայց անպատճառ ուզել էք խծբծանքներ յերիւրել, խաղացել էք բառերի հետ և... խորխորատն ընկել:

7. Ես գրել եմ. «Այն փոսը, որի միջով հոսում է և որը լցնում է գետը կամ գետակը, կոչվում է տաշտ»: Փոս բառի կողքին դուք բաւականացել էք sic դնելով: Հապա ինչպիսի տեղով է հոսում գետը, եթէ ոչ փոսով. գէ դուք, որ չէք հաւանել այդ արտայայտութիւնը, ասէ՛ք ուղիղը. չը լինի՞ թէ կարծում էք, որ գետերը փոսերով չեն հոսում:

8. Ասում էք. «Գէյզերը պ. Աբեղեանի մօտ հէյզէր է դառել, կարծելով որ այդտեղ նա ռուսական (փոխանակ ասելու ռուսերէնում) հ տառի բացակայութիւնն է մեղաւոր» (սա հայերէն է):

Զուր էք կարծում, որ ես վերոյիշեալ պատճառով եմ հէյզէր գրել: Դուք պարտաւոր էիք դասագրքիս առաջաբանը կարդալ և իմանալ որ ես գերմանական աղբիւր էլ եմ ձեռքիս տակ ունեցել. հետևապէս՝ կարող էիր ստուգել «հ»-ով թէ «գ»-ով է սկսվում այդ բառը:

Հէյզէր անունը իսլանդական ծագում ունի, գրվում է Geysir, եթէ հայերէն տառադարձութեամբ գրենք՝ գերմաներէնի արտասանութեամբ՝ դուրս կը գայ «Գայզեռ»: Եւրոպական լեզուներ իմացող ամեն մէկը գիտէ, որ անունները և տերմինները տարբեր լեզուներում միանգամայն տարբեր կերպով են արտասանվում, օր. ռուս. Իսլանդիա (հայերէն նա ռուսերէնի հետևողութեամբ), գերմ. Իսլանդ, անգլ. Այլէնդ: Հայերէն Ճապոնիա (նաև Եապոնիա), ռուսերէն Եապօնիա, գերմ. Եապան, անգլ. Ջէպըն: Հայերէն Հռենոս, ռուս. Ռէյն, գերմ. Ռայն ևայլն: Միթէ այս կամ այն տառի «բացակայութիւնից» են առաջ գալիս միևնոյն անուան այդ տարբեր արտասանութիւնները. միթէ «տգիտութեան» արդիւնք է, օրինակ, որ ռուսները չեն ասում Լայպցիգ, այլ Լէյպցիգ, չեն ասում Շտրասբուրգ, այլ Ստրասբուրգ: Ոչ մի լեզւում, բացի հայերէնից, չէ ասվում Անգղիա, այլ Անգլիա: Իմացէք, պարոն, որ ամեն լեզու իր տառադարձական օրէնքներն ունի: Դուք ասում էք, որ «գէյզեր» պիտի կոչվի՝ ռուսերէնի հետևողութեամբ. տգէ՛տ ասենք ձեզ, որ դուք «գայզիռ» չէք գրում: Հէյզէրը տաք աղբիւր է. իսկ անգլօ-սաքսական լեզուներում տաք բառի նշանակութիւնը արտայայտող խօսքը սկսվում է h տառով—գերմաներէն heiss (հայս), անգլիերէն heet (հիտ): Վերջապէս հէյզէր տերմինը ես չեմ գործածել առաջին անգամ. այդ և միւս տերմինները երկար տարիներից ի վեր գործածական են մեզանում, քաղաքացիական իրաւունք են ստացել, թէ դուք և թէ մենք ամենքս այդպէս ենք սովորել և կարդացել. չէ՞ք հաւատում. բաց արէք աշխարհագրութեան հին դասագրքերը: Ընդունված տերմինների հետ այդպէս որ խաղալու լինենք, քարը քարի վրա չի կանգնի:

(Կը շարունակվի)

Արտաշէս Աբեղեան

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

26 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Առաւօտեան վախճանվեց յայտնի թարգմանչուհի - բանաստեղծուհի Զիւմինան:

Երէկ Ցարսկօէ-Սէլօյում վախճանվեց Պետական Խորհրդի անդամ ճան. հաղ. ինժեներ ի. գ. խ. Սալօվը:

Խօլերայով հիւանդացան 15, մեռան 4 հ.:

Բարձրագոյն հրամանով կապիտան իշխ. Մակաեվը, որ դատապարտվեց մի և կէս տարվայ բանտարկութեան, պատիժը փոխարինվեց ծառայութիւնից արձակմամբ:

Օգոստոսի 25-ին Նորին Մեծութեանը բաղդ ունեցաւ ներկայանալ գնդապետ Լեախօվը:

ՍԻԶՐԱՆ: Կօչկարն գիւղում կրակի հետ անզգոյշ վարվելուց այրվեցին հացի ամբարները և տնտեսութիւնների կերակուրը: Մօտ 300 ընտանիք զրկվեց ապրուստից: Վնասները հասնում են 100,000 րուբլու:

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ: 1905 թ. զինւորական ապստամբութեանը մասնակցած նաւաստի Շեվչենկօն դատապարտվեց 2 տարով բանտարկութեան:

ՊԵՐՄ: Սեպտ. 10-ին 40 շրջանային վարչութիւնների մէջ սկսվում են պօստային գործողութիւններ:

ՔԻՇԻՆԵՎ: Զեմստվօն բացեց գիւղատնտեսական ցուցահանդէս:

ՍԱՐԱՏՕՎ: Բացվեց առաջին անասնաբուժական համագումարը:

ՎԻԵՆՆԱ: Ֆրանց-Յօսէֆը եկաւ Գրօսմէզերից զինւորական զօրախաղերին ներկայ լինելու համար:

ՇԵՎԵՆԻՆԳԷՆ: Բացվեց Բալտիկ և Սպիտակ ծովերի խնդրով զբաղվող կօնֆերենցիան:

ԼՕՆԴՕՆ: Ռէյտէրը հնդկական նաւամատոյցից ստացաւ Պիրի հեռագիրը, որ ասում է, թէ Կուկի ասածներին չը պէտք է լուրջ վերաբերվել: Վկաները հաստատում են, որ նա չէ հասել Հիւսիսային Բևեռին:

ԿՕՊԵՆՀԱԳԷՆ: Երէկ երեկոյեան Կուկը զեկուցեց իր կատարած ճանապարհորդութեան մասին: Ներկայ էին Թագաւորը, Թագուհին և Թագաւորական ընտանիքի անդամները: Ազգագրական ընկերութեան նախագահ պրինց Խրիստիանը շնորհակալութիւն յայտնեց Կուկին և խնդրեց ընդունել ոսկէ մեդալ ընկերութեան կողմից:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—11 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:
Մ. Գ. ԱԻԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
Ն. Վ. ԱԼԲՐԵԽՏ—1½ ժ. ներքին և երեխայոց հ.:
Օ. Վ. ԳԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Օ. Վ. ԳԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ռ. ԽԱՆ-ԱԶԱՏԻ և Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆԻ
Նախապատմական մարդը
և
Հայկական առասպելներ
Գինն է 50 կ.
**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ**
Գինն է 75 կ.
Պատկերազարդ դասագրքերը 3-րդ և 4-րդ բաժանմունքների, ինչպէս նաև ժողովրդական ընթերցանութեան համար, վաճառվում են «Գուտտենբերգ», «Կենտրոնական» և «Փարոս» գրավաճառանոցներում:
805. (օ. մ.) 10—4

Լոյս տեսաւ
„ԴԱՍԸՆԿԵՐ“
Առաջին տարվայ
Այբբենարան-ընթերցարան
Բոլորովին նոր ուղղութեամբ
Զարդարված բազմաթիւ գունաւոր պատկերներով
Դասագրքին կից կայ համառօտ բացատրութիւն գործադրողներին:
Կազմեցին
Ա. ՉԻԼԻՆԿԱՐԵԱՆ եւ Տ. ՌԱՇՄԱՃԵԱՆ
Աշխատակցութեամբ Ա. Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆԻ:
Ծանօթանալ ցանկացող դասատուները կարող են ձրիաբար ստանալ «Գուտտենբերգ» գրախանութից: Օտար տեղերից դիմողները պիտի ուղարկեն միմիայն ճանապարհածախքը 10 կ. պօստի մարկայով:
ԿԱԶՄԱԾ
Գինն է 50 կ.
Բոլոր քաղաքների գրավաճառներին զեղչ 25%
Գումարով առնողներին 20 տոկոս զեղչ: Ցանկացողները դիմեն Թիֆլիս, «Գուտտենբերգ» գրախանութին:
(օ. մ.) 754. 10—9

ՄԻ ԻՆՏԵԼԻԳԵՆՏ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ
Ընդունում են գիշերօթիկ աշակերտներ. կարելի է նաև դասերի կրկնութեամբ
Օրբելիանովսկայա փող., Տելեգրաֆնի տուպիկ, № 4, բնակարան Սերոնեանի:
(կ. ե. ու.) 835. 4—4

Նոր լոյս տեսաւ
Յ. Տէր-Միրաքեանի փոխադրած
ՀԱՐՏՄԱՆ-ՌՈՒԶԱՄԻ
ԻՐԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԾՎԱԾ ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԻ
Դ. տարվայ դասընթացքը գինն է . . . . 35 կ.
Նոյնի Գ. տարվայ դասընթացքը 30 կ.
Դասաւանդութեան ուղեցոյց (օրինակելի դասեր և սրանց տեսութիւնը) 1 ր.
Դ. տարվայ դասագիրքը տեսնելու ցանկութիւն ունեցողները կարող են դիմել Գ. Ղազարեանին:
(ու.) 784. 3—3

Օսլայի գործարանը
Ի. Գ. ԿԱԼԻՏԱԵՎԻ, Բօգօդուխօվում, Խարկօվի նահանգ, առաջարկում է կարտօֆելի ալիւր: Նմուշները և վաճառքի պայմաններն ուղարկվում են ըստ պահանջման:
(ու.) (M. 240089) 719. 8—5

«ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑ.
Վաճառվում են.
Երգեցողութիւնք ս. պատարագի Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ փոխադրեալ և դաշնագրեալ յերիս ի չորս ձայնս ի ձեռն Մ. ԵԿՄԱԼԵԱՆԻ, Գինը 10 ր.
(Alto). Երգեցողութ. ս. պատ. վասն քառաձայն խառն խմբի (ի զգեստաւորելն քահանայի) գ. 2 ր.
(Basso). Երգեցութ. ս. պատ. վասն եռաձայն արական խմբի 'ի զգեստաւորելն քահանայի գ. 3 ր.
(Soprano). Երգեցողութ. ս. պատ. վասն քառաձայն խառն խմբի (ի զգեստաւորելն քահանայի) գ. 2 ր.
(Tenore). Երգեցողութ. ս. պատ. վասն եռաձայն արական խմբի (ի զգեստաւորելն քահանայի) գ. 3 ր.
Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ»: Գումարով գնողներին մեծ զիջում կը լինի: Ուղարկելու ծախքը գրախանութի վրա է:
828. (ա. օ.) 5—5

ԱՐԱԲԱՋԵԱՆ
Մայրենի լեզու
Գները՝ Ա. տ. 25 կ., Բ. տ. 30 կ., Գ. տ. 40 կ.
Տարրական քերականութիւն
Գինը 20 կօպ.
Դիմել Թիֆլիսում «Գուտտենբերգ» և Կենտր. գրավաճ., Կարսում՝ Յովսէփ Արաբեանին:
Հեղինակի հասցէն՝ Александрополь О. Арабаджіану.
(շ. հ.) 816. 2—2

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
վաճառվում են Գր. ա.-ք. Երզնկեանցի հետևեալ աշխատութիւնները.
Քրիստոնէական բարոյագիտութ. գ. 50 կ.
Ուսումն աստուածպաշտութեան. » 50 կ.
Աշխարհագրութիւն Տարրական դասընթացք Հայաստանի աշխարհագրութեան համառօտ տեսութեամբ 60 կ.
Թուաբանական խնդիրներ եւ օրինակներ
Տարրական դասընթ. ա. և բ. տ., 30 կ.
գ. և դ. տարի . . 35 կ.
851. (ե. հ.) 10—2

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՈՆ
Երկսեռ մանկանց
Օրբէլ Օրբէլեանցի
(Հիմնված 1844 թւին)
Թիֆլիս, Լերմոնտովսկայա փող., № 1.
Ընդունվում են աշակերտներ, գիշերօթիկ և երթևեկ աշակերտ-աշակերտուհիներ, և պատրաստվում են բոլոր միջնակարգ դպրոցների համար:
Ընդունելութիւնը օգոստ. 23-ից, իսկ ուսման սկիզբը սեպտ. 1-ին:
(20, 23, 25 և 28) 812. 4—4

Լոյս տեսաւ
ԴԱԴԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ
կազմած
Ընդհանուր պատմութիւն 45 կ.
Դասագիրք բնագիտութեան 55 կ.
Առաջին հատոր
Դասագիրք բնագիտութեան 50 կ.
Երկրորդ հատոր
Դիմել՝ «Գուտտեմբերգ» և Կենտրոնական գրախանութներին:
Տպվում են միւս հատորները:
(«Մշակում» Դաւթեան ամուսինների անունով լոյս տեսած յայտարարութիւնը սխալ էր տպված. պիտի լինի Դադեան):
817. (22,28) 2—2

Կ. Հ. Բ. Ընկ. հրատարակութեամբ
Լոյս տեսաւ
ՍԵԴՐԱՔ ՄԱՆԴԻՆԵԱՆԻ
ՆՈՐ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ
(օրգանական մեթօդով)
Գինն է՝ Ուսուցչական մասի՝ 75 կօպ.
Աշակերտական մասի՝ 15 կօպ.
Պահեստը գտնվում է Ն. Մատինեանի գրախանութում: Դիմել՝ Тифлисъ, Эрив. площадь, Книжный Кіоскъ „Паросъ“ Н. Матиняна.
(օ. մ.) 799. 5—5

ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ
Գրիգորիս ա.-ք. ԵՐԶՆԿԵԱՆՑԻ
(Ըստ Գոլդենբերգի)
I, II տարի իններորդ տպագր. գ. 30 կ.
III, IV » հինգերորդ տպագր. » 35 կ.
Վաճառվում են
Կենտրոնական գրավաճառանոցում
Բոլորն էլ ընդունված են մեր դպրոցներում:
(ա. օ.) 853. 5—3

Մամուլի տակից դուրս եկաւ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
1) Դասատետր կրօնի Բ. տարի
2) Դասատետր կրօնի Ա. » (բարեփ.)
Իմ կրօնի դասատետրեր ցանկացողները կարող են դիմել Կովկասի բոլոր հայ գրավաճառներին և ինձ (Бебутовск. ул. 20): Զեղչ 20, 25 և 35%.
Սահակ ա.-ք. Սահակեանց
825 (ե. ո.) 10—3

ԾԱԽՎՈՒՄ Է
ՇՈՒՇՈՒ ԳԱՒԱՌՈՒՄ ՄԻ ՀՈՂԱԲԱԺԻՆ
որ բաղկացած է 100 դեսեատինի չափ և որի սահմաններում գտնվում են Շիկէր գիւղը, վարելահող, այգիներ և անտառ:
ՁԵՌՆՏՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ
Դիմել՝ Թիֆլիս, ԷԿՕՆՕՄԻԱ տպարանին:
ա. օ. 840. 10—5

ԿՈՉ

Ս. Սինոդը, ներկայ տարվայ մայիսի 5/16-ի որոշմամբ, թոյլատրեց ներկայ տարում Յովհաննէս Մկրտչի գլխատման օրը, առաւօտեան պատարագի ժամանակ, նոյնպէս և նախօրեակին, հսկումի ժամանակ, գանձանակ շրջեցնել Կայսրութեան բոլոր եկեղեցիներում ի նպաստ «իրանց պաշտօնական պարտաւորութիւնները կատարելու ժամանակ սպանված անձանց երեխաների Խնամատարութեան Ընկերութեան»:

Այդ տուրքը կը գործադրվի ստորին զինւորականների և կառավարչական, հասարակական և մասնաւոր հիմնարկութիւնների ծառայողների երեխաներին խնամելու վրա, ի բաց չառնելով և բանւորներին, որոնք սպանվել են կամ իրանց պարտաւորութիւնները կատարելու ժամանակ կամ իրանց պարտաւորութիւնները կատարող ուրիշ ծառայողներին աջակցելու համար, կամ, վերջապէս, պատահմամբ անկարգութիւնների, կողոպուտների և յուզմունքների ժամանակ:

Ի նկատի ունենալով, որ ընկերութեան նպատակն է հնարաւորութիւն տալ թշուառ որբերին մեծանալ նոյնպիսի ազնիւ աշխատաւորներ և Հայրենիքի հաւատարիմ ծառաներ, որպիսիք էին նրանց հայրերը, իսկ այդ նպատակն իրագործելու համար մեծ միջոցներ են պահանջվում, որոնցից մէկն է և յիշեալ գանձանակադրամը, դիմում եմ այդ օրը բոլոր աղօթողներին. թող չը կարճվի նրա ձեռքը այդ բարի գործի համար:

Ստորագրեց. նահանգապետ՝ Լօզինսկի

(20, 28) 2—2

Առևտրի եւ արդիւնաբերութեան մինիստր. տնօրինութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
Առևտրական Գիտութիւնների Կուրսեր
(Թիֆլիս, Միքայէլեան պրոսպ. տուն № 24|4)
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն: Դասընթացքն աւարտողներին տրվում են ատեստատներ: Առարկաներն են. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական), 2) Առևտրական թւաբանութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանօնադրութիւն), 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Թւաբանութիւն համրիչի վրա, 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն): Առարկաներն ուսուցանվում են Արևմտեան Եւրոպայի առևտրական ակադեմիաների ծրագրով: Ամբողջ տարվայ վճարն է 60 ր.:
Գրելու մեքենայի վրա գրելու դասեր:
→ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ ←
Զբաղմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին: Խնդիրների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից ամեն օր ժ. 10—12 և 4—7.
Համառօտ ծրագիրը և կանօնները ձրիաբար տրվում և ուղարկվում են կուրսերի շէնքում:
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝
Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(օ.մ.) 774. 20—6

ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ
Մոսկվայի քաղաքային դպրոցների ուսուցիչների
Փոխադրեց և յարմարեցրեց հայոց դպրոցների ծրագիրներին
ԱՐՇԱԿ ՍՊԱՐԱՊԵՏԵԱՆ

Առաջին տարի	գինն է 12 կ.
Ա. պրակ (I և II տարի միասին) չորրորդ էժանացրած տպագ.	25 կ.
Բ. պրակ (III տարի) երրորդ տպագրութիւն	30 կ.
Գ. պրակ (IV տարի) երկրորդ տպագրութիւն	30 կ.
Դ. պրակ (V տարի) } Ըստ Շապօշնիկովի և Վալցովի	40 կ.
Ե. պրակ (VI տարի)	50 կ.
Ձեռնարկ թւաբանութեան	50 կ.

Սոյն բոլոր ժողովածները ընդունված և գործադրվում են մեր գրեթէ բոլոր միջնակարգ հոգևոր և ծխական դպրոցներում:
Գումարով գնողներին 20% զեղչ:
Պատրաստվում է տպագրութեան համար. «Թւաբանութեան դասաւանդումն Ա. և Բ. տարում—մեթօդական ցուցմունքներ ուսուցիչների համար»:
Դիմել Թիֆլիսի «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» գրախանութին (Тифлисъ, книж. магазинъ „ГУТТЕНБЕРГЪ“). կամ փոխադրողին՝ Тифлисъ, Абасъ-Абадская площадь.
(կ. չ. ու.) 829. 10—3

ՇԷՎԻՕՏ ԿՕԼՈՒՄԲ
Տղամարդկանց հագուստի համար կտորեղէնների շրջանում եղած նորութիւնը «Շէվիօտ Կօլումբ» կտորն է: Այնպիսի մի էժան գնով այն է 5 ր. 25 կ., լաւ տեսակինը 6 ր. 25 կ. տղամարդկանց ամբողջ կօստիւմի համար, 4¼ արշ., կտորը ոչնչով չէ զանազանվում արշինը 5—6 րուբ. արժեցող նոյնատեսակ կտորից և ունի նրա բոլոր յատկութիւնները, այն է՝ գերազանց ամրութիւն, գործնականութիւն և շքեղութիւն: Գոյները՝ սև, մուգ-կապոյտ, շագանակագոյն, ոզորկ-ձիթագոյն կամ թէ նոյն գոյները՝ բծերով: Ուղարկվում է պօստով, վերադիր վճարով և առանց կանխավճարի: Երեք կամ աւելի կտոր պատուիրելուց՝ իւրաքանչիւր կտորին ձրիաբար կցվում է հարկաւոր քանակութեան աստառացու: Առանց ռիսկի, լրիւ երաշխաւորութիւն, եթէ կտորը չը հաւանվի՝ յետ է վերցվում: Պահանջները խնդրում եմ հասցէագրել՝ Въ фабрику шерстяныхъ издѣлій
ЗИГМУНТА РОЗЕНТАЛЯ гор. Лодзь № 15 Я.
Թղթակցութիւնները ռուսերէն լեզուով:
(B. 45108) 744. 1—1

**Ա. ԱԹԱՆԱՍԵԱՆ
ԴԱՍԱԳԻՐՔ
ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ**
ՄԱՐԴ, ԿԵՆԴԱՆԻ, ԲՈՅՍ ԵՒ ՀԱՆՔ:
Դասընթացք III, IV և V տարիների:
Երկրորդ բարեփոխված տպագրութիւն՝ հայոց ժողովրդական և քաղաքային դպրոցների համար: Բազմաթիւ բնապատմական նկարներով:
ԳԻՆՆ Է 70 ԿՕՊԷԿ
Պահեստը՝ Тифлисъ, Книжный магазинъ „Гуттен бергъ“. Ծախվում է նաև «Փարոս», «Կենտրոնական» և ուրիշ գրավաճառանոցներում: (չ. ու. կ.) 802. 5—4

ВЕЧНАЯ СТОИМОСТЬ
ԱՐԾԱԹԷ ԺԱՄԱՑՈՅՑ
Միայն 4 ր. 95 կ., 2 հատը՝ 9 ր. 50 կ.
Շվէյցարական մի ֆաբրիկայի լիկվիդացիայի ժամանակ գնելով մեծ քանակութեամբ արծաթէ ժամացոյցներ, մենք հնարաւորութիւն ունինք միւս ֆիրմաներից կէս գնով էժան վաճ.: Ինչո՞ւ փողերը կորցնել սև ժամաց. համար, քանի որ 4 ր. 95 կ. դուք կարող էք մեզ մօտ ձեռք բերել 84 յարգի արծաթէ ժամաց., որը, նոյնիսկ 10 տարի անցնելուց յետոյ, ունի իր արժէքը: Արծաթը ընդմիշտ փող է: Ուղարկում եմ գեղեցիկ ժամաց., շատ տափակ, նորաձև, ընթացքը քարերով, ֆանտազի մետաղէ ցիֆերբլատով, յարումը կոթից՝ 40 ժամը մի անգամ, «Րէմօնտուար»: Փականները միանգամայն շքեղ գրավիւրներով: Ուղղված մինչև րօպէները, 6 տարվայ երաշխաւորութեամբ: Վերադիր վճ. և առանց կանխավճարի: Մինչև 4 հատի ճանապարհածախքը 40 կ. (Սիբիր՝ 75 կ.): Մօդային շղթաներ արծաթից, 84 յարգի, էլեգանտ շինուածք, հատը 2 ր. 50 կ., 3 ր. 50 կ., 5 ր.:
Հասցէ՝ Т—во „Альпага“, Варшава, Отд. 23.
(1, 15, 28) (B. 44415) 696. 3—3

Электропечатня Ав. Мугдусіаксова съ С-ми.
Большая Ванкская № 3.